



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4381



1874

2010

491.99-8

Կ-30

ԱՐԴՅՈՒՆ

ՊԱՐԳԻՆ

ՓՈՔՐԻԿ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

(Արքմանական ընթերցանութեան համար)

ԹԱՐԴՄԱՆՆԵՑ

ՄԱՐԻԱՄ ՉՈՒՎԱԼԵԱՆՑ

ՌՈՍՏՈՎ (Դօնի վերաց)

ԱՐԱ ՅՈՎՀԵՆՆՈՒ ՏԵՐ-ԱՐՄԱՆԱՐԵԱՆ

1874

491.39-8

4-30

Մ

ՊԱՐԴՈՒՅԻ

~~428~~

~~426-21~~


~~428~~

207-44

ՓՈՔՐԻԿ ՄԱՆՈՒԿՆԵՐԻԿ

(Անգլական ընթերցանութեան համար)

ԹԱՐԴԱՐԱՆ



Ա.Ա.ԽՈՎԱՅ (Գոհի դեղայ)

ՏՊՐԻ ՅՈՒՆԱՆԱԿԱ ՏԵՐ-ԱՐԵՎԱՄԱՆԱ

1874

2002



11749

А. С. ПОЛУХОД



С. И. Ф. 1. 2. 3. 4.

ԵՐԱՎԵՐԻ ՊԵՂԱԿԱՆ ԽՈՎՃԱՐ

(Հայոց հանրապետության հայոց կառավագական)

Дозволено Цензурою. Спб., 22 Октября 1873 года.

ԱՐԱՐԱՏԻ ՊՐԵՄԻԱ



ՀԱՅՈՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱՐԱՏԻ ՊՐԵՄԻԱ ՀԱՅՈՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԲՀ

ՏԾՈՒ

Ի Կ Բ

ԲԵՐՈՄԱԿԱՆ ԽՈՎՃԱՐ

ՅՈՎՃԱՆՆԵՍ և ԱՆԱ

ԶՈՒՎԵԼԵՐԵՑՆԵՐԻՆ

Ի Կ Բ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Խորին յարդանքով

ՀԱՅՈՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Մանիսիսն աղօն +

Տէր, ես մանուկ եմ տըկար,
Հոգովը ծալաւ գիտովթեան
Գարգեւեա դու, ով մեր հայր
Շնորհը և միաք հայ մանկան :

Առաքեա սէր, Տէր Յիսուս,
Ինձ հայերէն լաւ սորվել.
Յանկայ թօթով իմ լեզուս,
Վեղ այդ լեզով աղօթել:

Իմ այդ լեզով մայրենի
Շատ են զըսած քո զործեր.
Ուրեմն լեր ինձ հովանի,
Որ կարդամ այդ սուրբ զըսեր :

ԱՐԵՎՈՒԹՅՈՒՆ

Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն.

ԳԱՅՈՒ. (*)

... s. (S₂). b.

Uf, sw, hf, ff, wff, swff:

200 · P.

• , (75) . ०३ (५५८)

Աւշ, շատ, մատ, լիշ, սոստ.

Հատ մատ, մի ատամ, մի շիշ, մի շամայի:

(*) Իւշտանը ուստի էջը աշխարհում ենութեան-
նութեան մասին եղեւ պատեհ կետ, հենց առաջին դասեց
իւստի և գրամ պատճեան լուսաւը, այդ պատճեան
յօքինած: Տառեւը պետք է այնուհետ անուանել և հը-

ԴԱՍ Գ.

Է. Ն (ԱԾ). Է (ԿԾ).

Եկ, եմ, կամ, մուկ, տուն, շուն:
 Շատ մշակ կայ: Կաշի շատ կայ: Մի
 մշակ կայ: Մի շամամ: Մի մատիտ կայ:
 Կա ունի մի մատիտ ու մի շամամ: Կա
 շատ ատամ ունի:

ԴԱՍ Դ.

Է. " (ԱԾ) Չ (ՔԾ).

Էշ, շէկ, մէկ, կէս, միս, ամիս, ջան,
 մէջ, ականջ:
 Կա ունի մի շուն: Շուն ականջ ունի: Կա
 ունիմ մի կատու: Տան մէջ մի շուն կայ:

Հել, ինչպէս նոտա հնչվում և լուլում էն բարերէ մէջ:
 Պէտք է հնչել. "ա, բը, զը, թը, զը" և այլն, և
 "լ լէ". "այր, բեն, զիմ" և այլն: Պէտք է պարերը
 արտգ հնչել առաջ երեկոց առանց ը հնչենէ,
 որով հարդարանց այն բարերը: Խոսքնորդ էն+ բալիս
 հնչուել "հայերէն հայրալ" " գրել "ասոցանելու-
 հըսահանգէն":

ԴԱՍ Ե.

Ճ Գ (ԳԾ). Ռ (ՌԾ).

Գին, գինի, ընկեր, դաս, տասը:
 Կա իմ ընկերն է: Կա իմ դասը գի-
 տեմ: Կա ընկօւղ ունի: Իմ անունը
 Արշակ է: Շուշանը դասը գիտէ: Ոնկը
 ատամ ունի, ուտումէ նուշ, կաշի . . . :

ԴԱՍ Զ.

Ճ (ՃԾ). Ն (ՆԾ).

Ոտ, մոմ, գոմ, որս, բակ, տակ, բուն,
 չամիչ, ոչ, կանաչ:
 Կա գանակ չունիմ: Կա ատամ ունի,
 միս է ուտում: Կա միս չեմ ուտում,
 ատամ չունիմ:

ԴԱՍ Է.

Ն Ն (ՆԾ). Լ (ԼԾ).

Օղ, օղի, լալ, լու, աղ, մաղ, շաղ, կաղ,
 կալ, ուղտ:

Կա օղի ունի, ես չիլիկ ունիմ։ Դու
օգնական չունիս։ Մի աման կայ։

ԴԱՍ Ը.

Հ (Հը). Ե (Եը). Ա (Աը).

Դառ, ամառ, մազ, սազ, դազ, ղազ,
մուր, սուր, սար, չար, մարդ, եզն, նուռ։
Մեր երկրումը շատ գինի կայ։ Ենտա-
ռումը շատ դաղաններ կան։ Մեր տանը
մի դառը կայ։ Ես ունիմ մի չար կատու։

ԴԱՍ Յ.

Բ (Բը). Ռ (Ռը). Ժ (Ժը).

Թագ, դաթա, պատ, պանիր, թուղթ,
մութ, պատ, սպատ, ժամ, ուժ, կոպէկ։
Ես ունիմ մի կոպէկ։ Կա ունի մի կա-
պէկ։ Վապիկը կենդանի է։ Ես կերայ
կաթը, պանիր, սեր . . . :

ԴԱՍ Ճ.

Հ (Հը). Ե (Եը). Ճ (Ճը).

Աազ, վեց, ցեց, ճոճ, կարճ, վառիկ։
Շունը վազում է։ Ես վեց գրիչ ունիմ։
Գնաւ ճաշ կեր։ Աարդը կարմիր ծաղիկ
է։ Աարդը սիրում է կարդալ։

ԴԱՍ ՃԱ.

Ի (Իը). Ճ (Ճը). Ք (Քը).

Խուլ, ծուխ, ածուխ, փող, խաչ, ծառ,
ծեր, խաղ, փափուկ։
Ես սիրում եմ խաչ։ Խակ խաղողը վը-
նաս է։ Ծակը ատամ չունի։ Ծառը
արմատ ունի։ Երեխան փափուկ մատ
ունի։ Խմ պապը խուլ է։

ԴԱՍ ՃԲ.

հ (հը). ւ (ւը) + (ւը).

Հաւ, հաց, ցաւ, քացախ, կաւ, հինգ։

Ես հինգ հաւ ունիմ: Հացը փափուկ է,
ճաթը չոր է: Վարը ծանր է: Ենին
հեռու չէ: Թուրքը մարդ է: Վրիստո-
որ մեր Փրկիչն է:

ԴԱՍ ԺԳ.

Յ (Յշ). Յ (Յշ). § (Տշ).

Չի, ձուկ, հայ, թէյ, այս, հայր, մայր,
քոյր, ֆուրդօն, ֆրանդ:

Ես հայ եմ: Հաւը ձու է ածում: Օտ-
վումը շատ ձկներ կան: Ես սիրում եմ
հայ մանուկներին, որովհետեւ ես էլ հայ եմ:

Ենտառումը շատ թռչուններ կան.
Ինչպէս, սոխակ, աղոաւ, կոռնկ, շատ
գաղաններ էլ կան. ի՞չպէս, արջ, աղ-
էս, նապաստակ:

Դաշտումը շատ ծաղիկներ կան. ինչ-
պէս, մանուշակ, շուշան. սարերումը
թանկագին քարեր էլ կան. ինչպէս, ա-
ղամանդ, լալ. այն տեղ հանքեր էլ կան.
ինչպէս, ոսկի, արծաթ, պղինձ և եր-
կաթ:

Ոսկուց, արծաթից, պղնձից և եր-
կաթից շատ բաներ են շինում. ոսկին
թանկ է՝ քան թէ արծաթը, արծաթը
թանկ է՝ քան թէ պղինձը, պղինձը
թանկ է՝ քան թէ երկաթը:

Ով կամենում է աշխարհիս վերայ
բաղդաւոր լինել, պէտք է աշխատա-
սէր, չափաւոր, ինսցող, աղնիւ, իոնարհ
և ողորմած լինի:

Մի մարդուց հարցրին, թէ Եստ-

ւած ո՞ր տեղ է, պատասխանեց. „Ասացէք առաջուց, ո՞ր տեղ չէ“:

Մի իշխան բարկանալով մի գիւղական տանուտէրի վրայ, ասաց. „Խնչպէս կը պատժէի քեզ, եթէ բարկացած չը լինէի“:

Երիստիպպոսին հարցրին, թէ ի՞նչ բանով է զանազանվում իմաստունը տրդէտ մարդուց, պատասխանեց. „Երկուսին ևս մերկանդամ ուղարկիր անծանօթ մարդկանց մօտ և կը տեսնես“:

Պլատոնից հարցրին թէ ի՞նչ զանազանովթին կայ խելացի և անխելք մարդու մէջ, պատասխանեց. „Այն զանազանովթինը, ինչ որ բժշկի և հիւանդի մէջ“:

Դիոգինէսը մի անգամ լավտեր վառած հրապարակում շրջում էր լուսապայծառ ցերեկով. նրան հարցրին թէ ի՞նչ ես որոնում, ասաց, „Մարդ եմ որոնում“:

Մի մարդ երբ լսեց թէ մի քանի վատ մարդիկ նրան գովել են, ասաց. „Վասկածում եմ թէ մի գուցէ անզգուշովթեամբ մի վատ բան արած մինէի“:

Մի աղքատ պառաւ աղաջում էր Փիլիպպոս թագաւորին, որ նորա վէճը վճռէ. թագաւորը պատասխանեց, թէ ժամանակ չունիմ. Պառաւը պատասխանեց թէ. „Ուրեմն և ժամանակ չունիս թագաւոր լինելու“: Թագաւորը զարմանալով այս պառաւի պատախո-

սուվթեան վերայ առանց բարկանալու
լսեց այն մեծ բազմովթեանը, որ իրա-
տունք էր պահանջում:

Աս Մա Ին Ահու Հա Տա Եւ
Կո Ակ Եւ Աս Քը Բը Գո Թէ
Ու Բը Զէ Օ՞ Դէ Լէ Ու Բը
Զէ Խը Գո Ճը Ակ Ցը Շը Ճէ
Խի Ծը Փփ Հէ Իւ Բը Զէ
Յը Փփ.



Բառավոր.	Ատորակետ.	Միջակետ.	Կերպակետ.
Անկակետ.	Շեշտ.	Պարույր.	Պատիւս.
Երկար.	Ենթամինայ.	()	Չափերտ.

ԹՈՒԱՆՀԱՆԵՐ

1	<i>մի</i>	O	ա	I
2	<i>երկու</i>	OO	բ	II
3	<i>երեք</i>	OOO	գ	III
4	<i>չորս</i>	OOOO	դ	IV
5	<i>հինգ</i>	OOOOO	է	V
6	<i>վիշտ</i>	OOOOOO	՛	VI
7	<i>եռյան</i>	..	OOOOOOO	..	Է	VII
8	<i>ության</i>	..	OOOOOOOO	..	Ր	VIII
9	<i>ինը</i>	..	OOOOOOOOO	..	Ր	IX
10	<i>տասնյան</i>	.	OOOOOOOOOO	.	Ճ	X
50	<i>յասուն</i>	.	OOOOOOOOOOO	.	Ճ	L
100	<i>հարիւր</i>	.	OOOOOOOOOOOO	.	Ճ	C
1000	<i>հազար</i>	.	OOOOOOOOOOOOO	.	Ր	M

ԱՎԻՍԱԿ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԵԱՆ

1	×	1	=	1	4	×	6	=	24
1	×	2	=	2	4	×	7	=	28
1	×	3	=	3	4	×	8	=	32
1	×	4	=	4	4	×	9	=	36
1	×	5	=	5	4	×	10	=	40
1	×	6	=	6	5	×	5	=	25
1	×	7	=	7	5	×	6	=	30
1	×	8	=	8	5	×	7	=	35
1	×	9	=	9	5	×	8	=	40
1	×	10	=	10	5	×	9	=	45
2	×	2	=	4	5	×	10	=	50
2	×	3	=	6	6	×	6	=	36
2	×	4	=	8	6	×	7	=	42
2	×	5	=	10	6	×	8	=	48
2	×	6	=	12	6	×	9	=	54
2	×	7	=	14	6	×	10	=	60
2	×	8	=	16	7	×	7	=	49
2	×	9	=	18	7	×	8	=	56
2	×	10	=	20	7	×	9	=	63
3	×	3	=	9	7	×	10	=	70
3	×	4	=	12	8	×	8	=	64
3	×	5	=	15	8	×	9	=	72
3	×	6	=	18	8	×	10	=	80
3	×	7	=	21	9	×	9	=	81
3	×	8	=	24	9	×	10	=	90
3	×	9	=	27	10	×	10	=	100
3	×	10	=	30	10	×	100	=	1000

d
1
6
88

Աղիսասկ լազմանախթեան (Եթեան կապահանձնութիւն)։

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25
2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27
4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28
5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29
6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30
7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31
8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32
9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33
10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34
11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35
12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36
13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37
14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38
15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39
16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40
17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41
18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42
19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43
20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44
21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45
22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46
23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47
24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47	48
25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47	48	49

*

ԱՌԵՎԻՆ ՄԵՍԻ

1.

Վարդուհու էլեւ-ընկան առաջին օրը.

Մայրը առաւօտեան գալիս է Վարդուհու մօտ:
Վարդուհին վեր է կենում:

„Վարդուհի ջան, վեր կենալու ժա-
մանակ է. Շուշան, արի Վարդուհուն
շորերը հագցրու:

Եղբայրներդ արդէն վեր են կացել
և քոյրերդ էլ զարթնել են: Թէյը, սե-
րը և պաքսիմատները պատրաստ են:

Մանուկները նախաճաշիկ պէտք է
անեն:

Ըայց նախ և առաջ պէտք է երե-
սը խաչակնքել, կարգին հազնվել և Վա-
տուծուն ուղիղ սրտով աղօթք անել:

Վարդուհի ջան, երեսդ խաչակնքիր:

ՎԱՐԴՈՒՀԻ

Եմ այս էլեւ էլեւ Վարդուհի.

Դու արդէն չորս տարեկան ես, իմ վոքրիկ
Վարդուհի, քո սովորելուդ ժամանակն մօտենում
է. այս վոքրիկ զիբըր պարզեռում եմ քեզ, ողը
քեզ կարող է պիտանի լինել: Խրբ որ Վատուծած
կը սայ՝ կը մեծանաս, այն ժամանակը քո ծնօղնե-
րիդ օրինակը, նրանց խրատները և ուրիշ զրբեր
քեզ կը սովորեցնեն աւելի բարձր զիտութիւններ:
Դակ քո մօրաքրոջը միշտ հաճելի կը լինի մասնել,
թէ դու այս վոքրիկ զըքի վերայ կարդալ սովորե-
ցիր, ողը քեզ համար է զրած և թէ սրանից ստա-
ցար մի քանի առարկաների վերայ առաջին հաս-
կացողութիւնները:

Հիմի անկողնիցու դուքս արի:
Շուշան, Վարդուհուն մաքուր և եր-
կայն գուլպաներ ու կանանչ մաշիներ
տուր:

Նրան բարակ շորեր հաղցրու, որով-
հետեւ հիմի շոք է:

Դրա երեսը լուա և գլուխն էլ սանտրիթ “:

Վարդուհին անկողնիցը դուքս եւ-
կաւ, ինքը հազաւ գուշակաները և մա-
շիկները, թողեց իւր շորերը հաղցնել
և գլուխը սանտրել և մինչեւ անդամ
նրա մտքովը չի էլ անցաւ լաց լինել:

„Հիմք լաւ կանգնիր, ճեռքերդ կըրծ-
քիդ վրայ դիր և ասա՛. Տէր Վատուած՝
իմ մօրս, իմ հօրս, իմ մեծ մօրս և
իմ բոլոր աղքականներիս ուղարկիր բաղ-
դաւորովթին և առողջովթին. Ուղար-
կիր, Տէր Վատուած, և ինձ և եղբայր-

Ներիս և քրոջս, որ և մենք առաջ և
հնագանդ լինենք:

Հիմի մօրդ ձեռքը համբուրի և ա-
սաւ. „բարի լոյս“:

„Ըուշանին և եղբայրներիդ գրկիր,
բայց զգուշութիւնով համբուրի քրոջդ,
որովհետև նա դեռ շատ փոքր է“:

Վ ՀՅՈՒՄՆԵՐԻՆ ՆԱԽԱՆՇԱՉԻՆ Է անում.
,,Հիմի Նստիր ԵղբայրնԵրիդ Հետ և
Նախաճաշիկ արա՛:

Շուշան, Արդուհու կրծքի վրայ
մի անձեռոցիկ փաթաթիր:

Ապրդուհի ջան, լաւ բռնիք գդալդ,
ինչպէս քեզ սովորեցրել են և թէյը մի
թափիլ անձեռոցիկի վերայ:

Վարդուհի ջան, ինչո՞ւ ես փշրում
հացը. նայիր, ի՞նչքան փշրանք է թափ-
վել գետնի վրայ:

Եյդ լաւ բան չես անում. Աստուած
հացը նրա համար է տալիս, որ ուտենք
և ո՛չ թէ գետնի վրայ թափենք:

Շատ խեղճ մանուկներ կան, որոնք
բոլորովին ուտելու հաց չունեն:

Հա՛, դու այն պատճառով չես բո-
լորը կերել, որ փռքրիկ շան համար ես
պահել:

Հիմի քիթ ու պոռնկդ սրբիր և
շնորհակալութիւն արա մօրդ թէյի հա-
մար“:

Յ.

Հայրը և հայրը նեւ էն խմուտ.

Հիմի հայրը և մայրը պէտք է թէյ
խմեն:

Սեղանը կցած է, սամավարը և սե-
րը պատրաստ են, իսկ սիրելի հայրը
դեռ տուն չէ եկել:

Մի ոքմին գուռը բաց արաւ: Ահա
և հայրը տուն մտաւ:

„Ուրախացէք, երեխայք: Զեր հայրը
եկաւ“:

Վարդուհին հօր մօտ վազեց, նրա
ձեռքը համբուրեց և ասաց:

— Իարի լոյս, իմ սիրելի հայրիկ“:

„Իարեւ, Վարդուհի ջան: Իայց ա-
սացէք ինսդրեմ—երեխայքը հնազա՞նդ
են թէ ոչ“:

— Եւ ասիւ չուզիլ, շատ հնազանդ
են, մանաւանդ Վարդուհին“:

Հայրը և մայրը նստեցին սեղանի
մօտ և սկսեցին թէյ խմել:

Յետոյ, Վարդուհի ջան, ասաց մայ-
րը, ինչո՞ւ այդպէս շատ ես նայում բա-

Ժակակալի վրայ, չէ՞ որ դու արդէն խմեցիք“:

Վարդուհին հեռացաւ, նստեց փոքրիկ նստարանի վրայ և սկսեց իրան տիկինների հետ խաղալ:

Նրան : իրան մօտ կանչեց հայրը, պաքսիմատը սերով լիբը թէյի մէջը թրջեց և նրան տուեց :

— ԸստՀակալ Եմ, Հայրիկ ջան:
Բայց Պետրոսին և Յովհաննէսին:

„Երանց էլ կը տամ. ահա” ձեզ,
Պետրոս և Յովհաննէս“:

— Բայց կատարինէի՞ն :
„Կատարինէն դեռ վոքը է, նրա
ատամները դեռ դուրս չեն եկած և նա
չի կարող պարսիմատ ուտել : Եթբ որ
նա կը մեծանայ, էն ժամանակը նա էլ
կտկսի ուտել “:

—Ուրեմն ես սորտ համար կը պահեմ:

Եւս Ամարդուհին կոտրելով պաքսի-
մատի կտորը՝ թղթի մէջը փաթաթեց
և Առաջարիսէի համար պահեց, որ երբ
մեծանայ Նրան տայ: || : զնուու չ զանձ
այլ բժիշտայ ուսիս թիւնիքը վրացաւ
ով նորու մէջ արյա: || : զնուու արար
այս ուր զայր վանան զիւնու զօն ոյն ոյլ
: զիւնու զայր զայր այր ման զիւն
Առաջարիսէն իւ օք հէր գնուու է նարանը.

Հայրը իր առանձնասենեակը մտաւ,
իսկ մայրը բանալիները վերցրեց։ Ապր-
դուհին սկսեց սաստիկ աղաչել իր մօրը,
որ իրան էլ մառանը տանի. մայրը Ապր-
դուհու ինդիրքը կատարեց։

Վառանումք կային տանձ, ինձոր և
շատ զանազան քաղցրեղէններ։ Ապ-
դուհին ամեն բանից ուզում էր, բայց
մայրը ասաց, որ ոչ մի բան չի տալ,
որովհետև Արդուհին արդէն շատ կերաւ։

Վարդուհին իրան մօր խօսքը լսեց,
իրան բերանիցը ոչ մի խօսք չի դուրս
թռցրեց և մառանումը ոչ մի բանի
ձեռք չի տուեց։ Մայրը նրան մի բուռը
շաքարի գեղեցիկ սիսեռ ընծայեց խա-
ղալու համար։ Վարդուհին ուզում էր
իր մօր ետևից մառանի բոլոր պուճախ-
ները ման գալ, բայց մայրը արգելեց։

Մայրը ասաց Վարդուհուն. Երբ կը
մեծանաս, Էս ժամանակը դու էլ ինձ
հետ ամեն տեղ ման կը գաս։

5.

Վարդուհին այդուհը.

Երբոր մայրը Վարդուհուն իր հետ
և վերցրեց և գնաց մառանի ամեն քունջ
ու պուճախները ման գալու, այն ժա-

մանակը Վարդուհին լաց չեղաւ, այլ իր
գլխարկը դրեց և իր եղբայրների հետ
գնաց այդին։

Կայեցէք, ի՞նչպէս հնազանդ երե-
խայ է։ Կա ոչ մի բանի ձեռք չի տալիս,
չի քաղում ծաղիկները, հեռուից նրան-
ցից հոտ է քաշում և ձեռքերը իր մէջ-
քին դրած է նայում նրանց վերայ։

Կա վերցրեց իր սիսեռը, մի կա-
նանչ տեղ նստեց և խաղում է իր եղ-
բայրների հետ։

Ի՞նչպէս նա լաւ է ածում աւազը
մէկ տեղից միւս տեղ, ի՞նչպէս լաւ կի-
տուկներ է անում։

Պետրոսը և Յովհաննէսը նստեցին
սայլակի մէջը, — իսկ Շուշանը նրանց
խաղացնում ման է ածում։

Վարդուհին էլ էր ցանկանում սայ-
լակով ման գալ, բայց նրա համար տեղ

ը կար: Ա արդուհին կը սպասի, որովհետեւ խելօք աղջիկէ:

Եհա մանուկները երկու անգամ այդու շուրջը պառատ եկան:

Հիմի եղբայրները սայլակիցը դուրս կը գան և Ա արդուհին կը նստի:

Ա արդուհին այդումը երկար ժամանակ սայլակով ման եկաւ և շատ էլ խաղաց: Երեզակը պայծառ լուսաւորում էր և ինչպիսի գեղեցիկ թթմուրներ էին նստած մանուշակների և վարդի թփերի վերսց: Ճայ առ սիրաց:

❸. Անոն է զմայստ միջնառ արևինութիւն և զարդար պարբռնին կարբռն է իր Տօք հետ.

Դու արդէն բաւականին խաղացիք: Մայրդ կանչում է: Ա արդուհին խկոյն այգաւցը դուրս եկաւ և վերև գնաց:

Կա ինքը արդէն կարողանում էր սանդուղի վերայ բարձրանալ: Եհա նաև մենեակի մէջն է:

”Ա արդուհի ջան, արի մօրդ մօտ: Պէտք է կարդանք:

Հանիր գիրքդ:

Միայն թէ հիմի լաւ կարդա:

Մարդ,—վարդ, Ա արդուհի: Ա արդուհի:

Հը-նը-ա-զը-ա-նը-դը, հնազանդ: Ա արդուհին հնազանդ աղջիկ է:

Շատ լաւ, այսու ամենայնիւ զդուշութեամբ, գիրքդ մի' սպատոիր:

Ան Միայն կեղտոտ և վատ մանուկներն են իրանց գրքերը պատուամ: Լաւ կըրթված մանուկները իրանց գրքերը մաքուր են պահում,,:

Եղի շատ երկար ժամանակ Ա արդուհին կարդաց անսիալ:

Երբ որ Վարդուհին իրան դասը վեր-
ջացրեց և իրան մօրից շնորհակալու-
թին արաւ, այն ժամանակը նա ձեռ-
քի գիրքը իրան տեղը դրեց և կրկին
դնաց խաղալու:

Վարդուհին խաղը է եղբայրնեւն հետ.

„Ինչու ես խլում խաղալիքները
Պետրոսի ձեռքից:

Իրան տուր, տեսնո՞ւմ ես, Պետրոսը
լաց է լինում“:

Հնազանդ Վարդուհին խակոյն նրան
տուեց խաղալիքները:

„Եայիր, ահա քո տիկինդ նստա-
րանի վրայ է դրած. դու նրա հետ խաղա:

Յովհաննէսը կուղէ քո տիկինդ: Ապա-
սիր, ես նրան մի ուրիշ բան կը տամ:

Յովհաննէս, ահա քեզ խաղալու
գնտակ:

Ոչ, նա անպատճառ կուզէ տիկինը
և աղաջում է սաստիկ. Վարդուհի, նրան
տուր տիկինը, իսկ ինքդ խաղալու գըն-
տակով խաղա“:

Վարդուհին արդէն մեծ է, իսկ եղ-
բայրները դեռ փոքր են. Վարդուհին միշտ
պէտք է պատուէ իրան եղբայրներին,
պէտք է լսի նրանց խօսքը և կտառարի
նրանց կամքը:

Տ.

Վարդուհին գուծէ կը այ է.

„Վարդուհի ջան, դու արդէն շատ
խաղացիր, ժամանակ է փոքր ինչ աշ-
խատել:

Կաւ կրթված աղջիկները միշտ չեն

իսազում, այլ երբեմն պարապում են
աշխատանքով:

Վարդուհի ջան, վերցրու մշերը և
մի կծիկ թել:

Դուլպայի կապ գործի:

Եթէ լաւ գործած կը լինի, դու էղ
կապը կը պարգևես քո մեծ մօրդ:

Մի սեղմիր մատներդ այդպէս, մի
շտապիր. պէտք է աշխատել առանց
շտապելու:

Տեսնո՞ւմ ես, հատը վեր զցեցիր:
Տուր այստեղ. մայրդ կուղդէ:

Երբոր Վարդուհին կը վերջացնէ
այդ դուլպայի կապը, այն ժամանակը
իր եղբայրների, քրոջ, հօր և մօր հա-
մար կսկսի դուլպաներ անել:

Իսկ երբ կը մեծանայ, այն ժամա-
նակը կսկսի կարել շապիկներ և շորեր:

Վարդուհին վեց զոյգ դուլպայի կա-

պեր գործեց: Շատ լաւ, այս անգամ
բաւական է: Վարդուհի ջան, ձեռքիդ
գործքը մաքուր և կարգին պահիր“:

❸.

Վարդուհին էր հօր և եղբայրներէ հետ գնում է
էր ուժ հօր հօր.

„Վարդուհին բոլոր առաւօտը շատ
հնազանդ էր. լաւ կարդաց, շատ լաւ
գործեց. հիմի մեծ մօր մօտ գնանք:

Իսկ եղբայրներս և քոյրս կը գա՞ն
մեղ հետ:

Յովշաննէսը և Պետրոսն էլ կը գան.
Իսկ Հեղինէն տանը կը մնայ, որովհե-
տե նա դեռ շատ փոքր է:

Հաղնվեցէք, երեխայք ջան. Վար-
դուհի, հագիր: սալօպդ և գլխարկդ,
իսկ ձեռնոցներդ չը մոռանաս:

Դուք պատրաստ էք: Գնանք:
Վարդուհի ջան, ինձ տուր ձեռքդ:
Ե՞նչպէս լաւ եղանակ է: Մեծ մօ-
րից վերադառնալիս մտնենք ամառուայ
այգին:

Եհաւ մեծ մօր տունը: “Այեցէք, ե-
րեխայք, այնտեղ խելօք և հանդարտ
կացէք ու չարութիւն չանէք“:

10.

Վարդուհին մէծ հօք հօռ է.

Մեծ մայրը շատ ուրախացաւ, երբ
չեռուից տեսաւ Վարդուհուն, նրա մօ-
րը և եղբայրներին: “Աս դուրս եկաւ
նրանց դիմացը և ասաց. „Ե՞նչպէս էք,
իմ սիրելի մանուկներ“:

„Բարե ձեզ, թանկադին մեծ մայր“,

ասացին մանուկները և համբուրեցին նրա
ձեռքը:

Վարդուհին և նրա եղբայրները շատ
խելօք կացան մեծ մօր մօտ: Մեծ մայ-
րը տուեց նրանց շատ խաղալու թրղ-
թեր, տիկիններ, պատկերներ և զանա-
զան գեղեցիկ խաղալիքներ. նոքա եր-
կար ժամանակ խաղացին:

Մեծ մայրը նրանց մինչև անգամ
պաքսիմատներ տուեց:

Վարդուհին երկու պաքսիմատ կե-
րաւ, իսկ երկուսը պահեց. մէկը չեղի-
նէի, իսկ միւսը իր համար:

“Աս բոլոր սենեակներում ման էր
գալիս իր եղբայրների հետ, բայց ոչ մի
բանի ձեռք չի տուեց:

Դուքս գալուց առաջ նա բոլոր խա-
ղալիքները ժողովեց և պահեց: Մեծ
մայրը նրան համբուրեց և ասաց, որ ճա-

շից յետոյ երեխանց հիւր կերթայ, ո-
րոնք այդպէս սիրելի են և այդպէս խե-
լօք են կենում և շարութիւն չեն ա-
նում:

11.

Աշբուհն աճառայ այդուհն է.

Եխ, ի՞նչպէս լաւ է այգումը, ի՞նչ-
պէս կանաչաղարդ է գետինը, ի՞նչ հիա-
նալի ծաղիկներ են:

Իսկ այս տեղ ո՞րքան երեխայք կան:
Ի՞նչքան լաւ հագնրված տիկիններ կան:

„Աարդուհի ջան, զլուխ տուր այդ
տիկինին, որը քեզ հետ խօսում է, միշտ
պէտք է քաղաքավարի լինել:

Երեխայք ջան, վագեցէք:

Աարդուհի ջան, նայիր այդ թրր-
թուրը ի՞նչպէս գեղեցիկ թևեր ունի:

Չես կարող բոնել, թռաւ: Թրր-
թուրը թռչում է, իսկ Աարդուհին
փոքրիկ ոտքեր ունի:

Իսկ դու գիտես թէ այդ ինչ մեծ
սենեկաձանձ է, որը թռչում է այդ
վարդի մօտ և բղզացնում է: Եյդ —
սենեկաձանձ չէ, այդ — մեղրաձանձ է:

Աարդուհի ջան, ձեռք մի՛ տար նը-
րան, նա կը կծի:

Տեսնո՞ւմ ես, Աարդուհի ջան, թռր-
թուրը մեղրաձանձիցը գեղեցիկ է, բայց
մեղրաձանձը մեղր է ժողովում, իսկ
թրթուրը ոչինչ չի գործում:

Մեղրաձանձը թրթուրիցը աւելի
օգտաւէտ է“:

12.

Ա ՀՐԴԻՆ ՊՈՅՆ ՀԵՐԱՐԴԱՌՆԱԼԻՆ Թ աղուաց հնոց
պատահեց .

”Նայիր, մայրիկ ջան, մեր դռան
մօտ մի աղքատ կնիկ կայ կանգնած:

Նրա ձեռքին մի փոքրիկ երեխայ
կայ, որը մեր Հեղինեիցը մեծ է, բայց
ինչպէս լղար է:

Կարելի է թէ էս օր նա դեռ ո-
չինչ չի կերել: Նրա մայրը մի աղքատ
կնիկ է, որը փող չունի, որ հաց առնի:

Մայրիկ ջան, իմ մեծ մօրից ստա-
ցած պաքսիմատի կտորը ևս նրան կը
տամ. իսկ հօրիցս մի հինգ կոպէկ կը
խնդրեմ և կը տամ այդ կնոջը“:

Վարդուհին վեր զնաց հօր մօտ և
նրան աղաւելով ինդրեց: Հայրը գիտէր,
որ Վարդուհին մի հանդարտ և իւելօք

աղջիկ է. նրան հինգ կոպէկ պարզեց
և հրամայեց այն աղքատ կնոջը տալ:

Վարդուհին ուրախութեամբ տա-
րաւ այդ փողը և պաքսիմատը ու այդ
աղքատ կնոջը տուեց:

Վինը ինդրում էր Աստուծոց, որ
այդ աղջիկ-պարոնը մեծանար և Աս-
տուած դրան բաղդաւորութիւն և եր-
ջանկութիւն պարզեւէր:

Սննուկը ուրախութեամբ կերաւ այդ
պաքսիմատը և Վարդուհուց շնորհա-
կալութիւն արաւ:

13.

Ա ՀՐԴԻՆ ՏԱԼ Է Ա-ՊՈ-Յ.

”Ճաշ ուտելու ժամանակ է: Մեղանը
գցած է, ասլուքը պատրաստ է: Երիք
ուտե՞նք:

Եյսօր ապուրը ի՞նչ համով է։ Հովացրու, Ալարդուհի ջան, որ բերանդ չերի։ Սեղանի մօտ նստիր ուղիղ և կարգին։

Եյդպէս շատ հաց մի՛ ուտիւ, փորդ կը ցաւի։

Եղբայրներիդ, միս չեն տալ, որովհետեւ միսը փոքրիկ մանուկների համար վնասակար է։ Ալարդուհուն կարելի է թողոււ մի փոքրիկ կտոր միս ուտեւ, որովհետեւ նա նրանցից մեծ է, նրան կարելի է և մի խիար տալ։

Ենուշ արա՛, Ալարդուհի ջան, միսը հացի հետ անուշ արա՛, իսկ առանց հացի առողջարար չէ։ Դու ինչո՞ւ ես հացի կտորը մատով բերանիդ մէջը կոխում։ Եյդ անքաղաքավարութիւն է։

Հիմի ջուր խմիր, միայն շատ քիչ։ Ալարդուհին խորոված չի ուտիւ,

որովհետեւ փոքրիկ մանուկներին շատ ուտելը վնասակար է։

Եհա՛ նրան մի տանձ և մի քանի բալ։

Ալարդուհին շատ բարի քոյր է. մէկ բալը Պետրոսին տուեց, իսկ միւսը ինքը իր ձեռքով Յովհաննէսի բերանը դրեց։

14.

Առունենին չար չնկամ։

Ճաշից յետոյ Ալարդուհին սկսեց իր Եղբայրների հետ խաղալ։ Եիս, ի՞նչպէս արագ են վազում նոքա։

Եհա՛ Ալարդուհին սլկվեցաւ վար ընկաւ և իր գլուխը պատռեց։ Նա արգէն կամնում էր լաց լինել, բայց նա միտքը բերեց, որ լաւ կրթված աղջիկները երբէք չեն լաց լինում, եթէ մինչև անգամ վար էլ ընկնեն։

Սիրելի աղջիկը վեր կացաւ և լաց չի
լինում, նրա գլուխը արդէն չի ցաւում
և Ալարդուհին կրկին վազում է:

‘Կա թաք կացաւ անկիւնումը և
պէտրոսը նրան չը գտաւ. իսկ երբ նա
սկսեց դուրս գնալ, այն ժամանակը Յով-
հաննէսը նրա ետևից հասաւ:

Ալարդուհին խաղալուց յետոյ կեր-
թայ իր մօր մօտ:

15.

Աշուրուհին խօսում է իր մօր հետ.

„Եռաջ քաշիր քո մեծ աթոռը
մօրդ մօտ և մենք կը խօսանեք քեզ հետ:

Ալարդուհին ի՞նչ դադաններ է տե-
սել:

Ծոմ, կատու, ձի, կով, և ոչխար:
Ծունը հաշում է, նա շատ բարի է,

հաւատարիմ է. բայց չը պէտք է բըռ-
նել ո՛չ նրա ականջներիցը և ո՛չ պոչի-
ցը, որովհետև նա կը կծի:

Կատուն մոլեայօ է կանչում և մըռ-
ուացնում է: Կատուի հետ պէտք է ա-
ւելի զգուշութեամբ վարվել, չի հարկա-
տոր կատաղացնել. նա չանկեր ունի, նա
կարող է չանկռել, — նրան պէտք է
զգուշութեամբ շփել:

Չին խրինջում է. նա շատ ուժեղ
է և գեղեցիկ: Մանուկները ձիու մօտ
չը պէտք է կանգնեն, որովհետև եթէ
ձին քացի խփի՝ կարող է սպանել: Ալա-
րդուհին ձի է սիրում, որովհետև նրա-
նով զբօննելու են գնում: Երբ նրա եղ-
բայրները կը մեծանան, այն ժամանակը
հայրը նրանց համար ձիան կառնէ: Ալա-
րդուհին իր մօր և Հեղինէի հետ կը նստի
սայլակի մէջ,—իսկ եղբայրները ձիանու

վերայ. թրախիք, թրախիք և հեռու կեր-
թանիք:

Կովը բառանչում է: «Յա տալիս է
կաթ. կաթի երեսից սերը քաշում են
թէյի համար: Կաթից շինում են պա-
նիր, մածոն, իւղ և թան: Կովը ամե-
նահարկաւոր կենդանի է:

Ոչխարը մայում է: Մանուկները կա-
րող են խաղալ ոչխարի հետ, որովհետեւ
նա շատ բարի է և նրանց վնաս չի տալ:
Ոչխարի վերայ երկար և գանգուր բուրթ-
կայ, այդ բրդիցը զանազան առարկա-
ներ են շինում»:

16.

Վարդուհին կը կն եռում է ի՞ս օք հետ.

— Վարդուհի ջան, ինչո՞ւ համար է
Եսուուած քեղ աչքեր տուել:

„Որ ես նայեմ“:
— Խոկ ականջնե՞ր:
„Որ ես լսեմ“:
— Խոկ լեզո՞ւ:
„Խօսակցոթեան համար“:
— Խոկ ատամնե՞ր:
„Որ ես ուտեմ“:
— Խոկ ոտքե՞ր:
„Որ ես ման զամ“:
— Խոկ ձեռքե՞ր:
„Եշխատանքի համար“:
— Վարդուհի ջան, առ զործքդ և
էլի զործի վեց զոյդ քո զուլպայի կա-
պերից:

17.

Վարդուհին հերեւի օք.

Վարդուհիի հօր և մօր մօտ հիւ-
րեր եկան: Տուն մտաւ նրա մեծ մայրը,

մօրաքոյրները և այն բարի պարոնը, ո-
րին հայրը սաստիկ սիրում՝ է և որը
միշտ իր ջերումը քաղցրեղէններ ունի:
‘Արանց ետևից էլի մի քանի հիւրեր ե-
կան:

Վարդուհին բոլորի առաջը դուրս
եկաւ ուրախութեամբ, իրան մեծ մօր
ձեռքը համբուրեց, իրան մօրաքոյրնե-
րին դրկեց և բոլոր հիւրերին դրոխ
տուեց:

‘Կա ոչոքից քաղցրեղէններ չէ ու-
զում, որովհետեւ նա գիտէ, որ այդ
ինչպէս լաւ չէ և անքաղաքավարու-
թիւն է. նա իր մօր մօտ խոնարհ կանգ-
նած էր և ոչոքին չէր խանդարում խօ-
սալու ժամանակ:

Վարելի է թէ Վարդուհին կասի իր
մեծ մօր համար այն երգը, որը սովո-
րել է իր հօրից:

„Շատ լաւ, մայրիկ ջան, ես կա-
սեմ ‘Օփեռնակը’:

‘Օփեռնակ, ծիծեռնակ,
Դու դարնան սիրուն թրունակ.
Գէպ ի ուր, ինձ ասա,
Թըռուում ես այդպէս արագ:

Ե՞ս, թրուիր, ‘Օփեռնակ,
Օքնած ուեղս Եշտարակ.
Ենդ շինիր քո բունը,
Հայրենի կառւրի տակ:

Ե՞ս հեռու ալիսոր,
Հայր ունիմ սրգաւոր.
Որ միակ իւր որդուն
Աղասում է օրէ օր:

Ելր տկնես զու նորս,
Կնձնից շատ բարեւ արա
Եսա, թող նըստի լայ
Իւր անբաղդ որդու վերայ:

Գուպատմէ թէ ինչպէս,
Եստ անտէր ու իւրզ եմ ես,
Միշտ լարվ ողբարով
Կեանկս մաշուել, եղել կէս:

Ինձ համար ցերեկը,
Պութ է շըօջում արեգը.
Գիշերը թաց աչքիս,
Քոնը մօտ չի գալիս :

Եսիր որ չի բացուած
Թառամեցայ միացած .
Ես ծաղիկ գեղեցիկ,
Հայրենի հողից զըթկած :

Դէ՛չ, սիրուն ՞Օիծեռնակ,
Ճեռացիր թռիր արագ .
Դէպ ի Հայոց երկիրը,
՞Օվնած տեղը Եշտարակ :

— Շատ լաւ —, կարելի է թէ մեզ
Համար մի ուրիշ երգ էլ կը երգի, զոր
օրինակ. Եր հեռանասը :

„Ուրախութեամբ, ես այդ շատ լաւ
գիտեմ“:

Ե՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից
Կարօտ թողուս սիրա բարեկամք քեղանից
Մեր ամենիս զու մայր էիր զըթառատ,
Երդ հեռանաս, մեզ մութ պատէ անփարատ,

Քո սուրբ ձեռօք մեր վէրքերը շատ անդամ,
Լուանայիր, քեզ զընէիր ամեն ժամ .
Քո մազերից ոլրէիր վիրակապ,
Քո բոլոր կեանքդ ազգիդ համար էր ագապ :

Երդ Հայոց զօրքն իւրեանց մօրից որբանայ,
Վըրաց ազգը քո խընամօք պերճանայ .
Հայաստանը զըթկի իւր սուրբ Շուշանից,
Վըրաստանը բուրէ հոսով քաղցրալից :

Ուր որ երթաս, ուր որ լինիս տիրուհի,
Մեր սիրա հոգին քեզ հետ տանիս մաքրուհի .
Գշնաս բարեաւ, մեր լցո հաւատ քեզ ընկեր,
Եշն ու Խաչը քեզ պահապան զօր գիշեր :

Եզդդ ու հաւատդ պինդ պահպանէ մէջ Վըրաց .
Հայ անունը միտքըդ պահէ անմոռաց .
Լոյս հաւատիդ հաստատ կացիր յաւիտեան,
Լոյս հաւատըդ քեզ միշտ պահէ անսասան :

— Շատ լաւ, Վարդուհի ջան, ա-
մենքը քեզ կը սիրեն, որովհետև հնա-
զանդ ես մօրդ :

18.

Վարդուհներ. Հոգ հոյնակես հիշեց եկան.

— Ուրախացիր, Վարդուհի ջան, քեզ
մօտ էլ են հիւրեր դալիս, Մկրտիչը,
Մարիամը, Պօղոսը, Եննան, Յովակիմը,
և Կարապետը:

Վարդուհին հանեց իր խաղալիքները
իր զանազան տեսակ տնտեսական առար-
կաները. այստեղ այնտեղ դարսեց պր-
նակներ, խեցիներ, բաժակ, թէյաման,
դանակներ և պատառաքաղներ:

Նա հրաւիրում է իր հիւրերին և
իր թէ նոցա համար ածում է սուրճ,
թէյ և սեր:

Մանուկները իրը թէ իրանք իրանց
համար պատրաստում են խորոված, տա-
պակայ, սպաս և խաղալով իրը թէ
ճաշ են պատրաստում:

„Վայիր, Վարդուհի ջան, Եննան
կանգնած է. առաջ քաշիր նրա մօտ
աթոռը և ասա. չէք կամենալ նստիլ:

Կարելի է թէ կամենաք պատկեր-
ներով զուարձանալ: Եհա ձեզ մի ամ-
բողջ խաղալիք:

Եիս, ի՞նչպիսի հիանալի երեք յար-
կանի տուն շինեց Մկրտիչը: Օգուշու-
թեամբ, մանուկներ, մի՛ շարժէք սե-
ղանը:

Եհա քեզ տրաքոց: Յովակիմը սե-
ղանը շարժեց և տունը շուռ եկաւ. այ-
սու ամենայնիւ չը պէտք է բարկանալ
Յովակիմի վրայ. նա այդ յանկարծ և
պատահմամբ արեց:

Երեխայք, կարելի է թէ դուք խս-
կապէս քաղցած էք:

Եհա, Յովհաննէսը իրը թէ գիտու-
թեամբ թան ու սեր է բերում:

Ալարդուհի ջան, համեցէք արա. չէ՞
որ դու տան տիկին ես: Առ թէփշին և
խնդրի մանուկներին ուտելու:

Տես, տես, Ալարդուհին կուզէ իր
համար ամենից առաջ վերցնել: Այդ
լաւ բան չէ. առաջ պէտք է հիւրերին
համեցէք անել: Ալարդուհին պէտք է
ամենից յետոյ վերցնի, որովհետեւ նա
տան տիկին է:

Այդ հացի երկու կտորները եղբայր-
ներիդ համար թող մնան. եղբայրներդ
երբ որ կը զարթնեն, այն ժամանակը
վերև կը դան:

19.

Խղճացները գալիս են, Առրտոհնեն ողար է գալիս.
„Հա՛, Պետրոսը և Յովհաննէսը զար-
թել են: Այս տեղ են գալիս: Կոքա

ի՞նչպէս ուրախ են, ի՞նչպէս ժպտում
են“:

Ալարդուհին համբուրում է իր եղ-
բայրներին, որովհետեւ նա նրանց շատ է
սիրում:

Ալարդուհին քաղցրեղէններ չէր ու-
զում այն բարի պարոնից, բայց նա նրան
երկու հատ քաղցրեղէն պարգևեց. մէկը
սպիտակ, իսկ միւսը կարմիր:

Նա սպիտակը կերաւ, բայց կարմի-
րը երկու հաւասար կտոր արեց և իր
եղբայրների համար պահէց: Այդ ի՞նչ-
պէս ուրախացրեց նրանց, նոքա ի՞նչ-
պէս շնորհակալ եղան նրանից:

Եթէ մէկը խաղար, մանուկներ պար
կը գային“:

Ալարդուհին իր մեծ մօր մօտ գնաց,
գգվեց նրան և խնդրեց նրան, որ նա
փոքր ինչ խաղայ:

Ուեծ մայրը նստեց ֆօրտոպիանի
մօտ և խաղաց լաւ պօլիս:

„Պար եկէք, երեխայք:

Օգուշութեամբ, Վարդոհի ջան,
Պետրոսին այդպէս մի՛ քաշ տալ. նա
քեղանից փոքր է և դեռ չի կարողանում
արագ վազել:

Տեմսում ես, չը լսեցիր, անդոյշ
պտոյտ ես գալիս. Յովհաննէսին բըր-
դեցիր և նա վար ընկառ:

‘Երողութիւն ինդրի նրանից:
Փոքր ինչ պար արի’ Աննայի հետ:
Հիմի բոլորդ էլ պար եկէք բոլորի
շուրջ՝ ձեռքի տուած:
Միւս կողմի վրայ, որ գլուխներդ
պտոյտ չը գայ:

Վարդոհի ջան, այդպէս բարձր մի՛
երգիլ:

Խելօք մանուկները երբէք այդպէս

չեն գոռում: Կմկային միջոյն բնույթ
հիւրերին կը զզվեցնես, և եղինէին
կը ղարթեցնես, իսկ նա իր օրօրոցումը
ի՞նչպէս հանդարտ քնած է “:

Սանուկները երկար ժամանակ պար
էին գալիս, երբեմն բոլորը միասին, եր-
բեմն զոյգ զոյգ:

Վերջապէս նոքա դադարեցին և
նստեցին: Ուեծ մայրը նոյնպէս դադա-
րեց և էլ չը խաղաց:

Վարդոհին իր մեծ մօր ձեռքը համ-
բուրեց և շնորհակալութիւն արաւ լաւ
պօլիսի համար:

20.

Վարդոհու հիւրերը սկսեցին պատ-
րաստիլ իրանց տուները գնալու, նա

Նրանց բոլորին համբուրեց և մնաս բարեւ ասելուց յետոյ, նա նրանց խնդրեց կրկին իր մօտ շնորհք բերել միւս օրն էլ:

Յետոյ նա ժողովեց բոլոր խաղալիքները և մի արկղի մէջ պահեց:

Տախտակամած վրայից պատկերները ժողովելուց յետոյ, նա տարաւ նրանց իր մօր մօտ:

Պետրոսը և Յովհաննէսը նրան օգնեցին:

Եթէ մանուկները մաքուր ժողովում են խաղալիքները, այն ժամանակը նրանք միշտ խաղալիքներ են ունենում իրանց ազատ ժամանակը խաղալու համար:

Հիմի Յովհաննէսը բերեց սամավարը և թէյի սարք ու կարգը մօր և նրա հիւրերի համար:

Վարդուհուն արդէն աւելի ոչինչ չեն

տալիս, որովհետեւ նա խմել է թէյ և նա պէտք է փոքր ինչ վաննայի մէջը նստի: Վաննան պատրաստ է: Շուշանը Վարդուհու ետևից եկաւ:

„Գնա՞ Վարդուհի ջան, մի՛ լար և բոլորին բարի գիշեր ասա՞՞ւ:

Վարդուհին գնաց և լաց չեղաւ, թէպէտ նա բոլորովին չէր ուզում հիւրանոցիցը դուրս գնալ:

Կա իր մեծ մօր, իր մօր և հօր ձեռքը համբուրեց, գրկեց իր մօրաքոյրերին և այն բարի պարոնին՝ որի ջէրումը միշտ քաղցրեղէն կայ: Բոլորին էլ շատ քնքոյշութեամբ գլուխ տուեց:

21.

Վարդուհին լողանառ է և յետոյ ընկրէտ է անուռ:

Վարդուհին ցածր գնաց և ուրա-

Խութեամբ շորերը հանեց Շուշանի օգ-
նութեամբ:

Աննայի մէջը հանդարտ նստած է
իր համար և մի ձեռքից միւս ձեռքու-
մըն է ածում ջուրը:

Արդուհին լողանալ չի սիրում,
բայց պէտք է լողանալ, որովհետեւ բը-
ժիշկը հրամայում է: Արդուհու հա-
մար այդ բանը առողջութիւն է. վան-
սայից յետոյ նրա ոչ մի տեղը չի ցաւիլ:
Արդուհին զարմանալի հնազանդ
աղջիկ է. առանց նազ անելու և ա-
ռանց հակառակվելու թողեց իրան լո-
ղացնել:

Աննայից դուրս դալուց յետոյ,
Արդուհին հաքաւ տաք բաճկոնը և
իր եղբայրների հետ ընթրիք արաւ:

Դակ ինչպէս համեղ էր կաթով
փլաւը:

Արդուհին ընթրիքից յետոյ էլի
վազում էր և խաղում էր, քանի որ
դեռ իր մայրը չէր եկել: այդով առ
աշ զույս առ մայրի առաջախնդրությունը
գնանարշար ոճոց առ զույս ամ զա որուն
առ զանդ, զիզային անդուն բայց ոճոց 22.

Վարդուհին ժնում է ժնելու:

»Արդուհի ջան, քնելու ժամանակ
է, մօրդ հետ ասաւ նրա ասած աղօթքը:

Շնորհակալ եմ՝ քեզանից, Տէր Սո-
տուած, քո ողորմութեան համար: Ու-
ղարկիր հանգստութիւն, Տէր Սոտուած,
որ և ես, և հայրս, և մայրս, և եղ-
բայրներս ու քոյրս ել հանդարտ քնենք
և էզուց առողջ զարթնենք:

Հիմի Արդուհի, զրկի՞ր մօրդ և
մայրդ ել քեզ կը զրկէ, որովհետեւ ամ-
բողջ օրը դու խելօք, հնազանդ և հան-
դարտ կացար:

Եւ Աստուած, և Հայրը, մայրը ու
մեծ մայրը սիրում են հանդարտ մա-
նուկներին:

Ծնորհակալութիւն արա՛ այնոր հա-
մար, որ նա բոլոր օրը քեզ պահպանեց:

Մարդ կրկին համբուրիր, երեսդ խա-
չակնքիր և Տէրը քեզ հետ:

Դարի գիշեր, Վարդուհի ջան“:



ԵՐԿՐՈՐԴ ՄԵՍՆ

ՀԱՅԹԵՐՑԵՐԸՆ.

Ծատ այնպիսի օրեր անցան, ինչպէս
մենք նկարագրեցինք. կարծեմ մի տա-
րուց աւելի անցկացաւ, իսկ Վարդու-
հին միշտ հնազանդ էր և ջանասէր: “Ես
այն ժամանակը արդէն բաւականին լաւ
էր կարդում և համարում և երեք զոյգ
էլ գուլպայ էր գործել, երբ իր հայրը
նրա համար մի լնդերցարան առաւ,
որի մէջը շատ զուարձալի և բարոյա-
կան պատմութիւններ կային: Ուրախա-
ցած Վարդուհին իր մօր հետ ամեն օր

կարդում էր այդ պատմութիւնները, ո-
րոնցից մի քանիսը այստեղ աւելորդ չենք
համարում յիշել, որք են.

Ա կ ն ս ց.

Ո՞ի գիւղացի տեսաւ որ ծեր մար-
դիկ ակնոց էին դնում կարդալու հա-
մար: Կա զնաց մի քաղաք վաճառա-
կանի մօտ, որ ակնոցներով առևտուր
էր անում, և ինդրեց նորանից ամենա-
լաւագոյնը: Վաճառականը տուեց նրան
այն, ինչ որ նա ինդրեց: Գիւղացին
ակնոցը աչքերին դրեց, առաւ ձեռքը
դիրք և առաց, թէ այս ակնոցս պի-
տանի չէ: Վաճառակը տուեց նրան ու-
րիշ ակնոցներ, բայց սոքա ևս նրա հա-
մար անպիտան էին: Ոիսվ բանիս, որ-
քան ակնոց և առնում էր նա, ոչ մե-
կը չը օդնում նրան կարդալու: Ի վեր-

ջոյ վաճառականը հարցրեց նրան. „Բն-
կեր, արդեօք կարդալ գիտե՞ս դու՞“: —
„ԵՇ մարդ, պատասխանեց գիւղացին,
եթէ ես կարդալ գիտենայի, ինձ ի՞նչ
հարկաւոր էին քո ակնոցները“:

Ճ ս ւ.

Մարդուն մէկը հարցրեց Դիոգինէ-
սին՝ թէ ժամը քանիսի՞ն պէտք է ճա-
շել: Պատասխան տուեց փիլիսոփան. ե-
թէ հարուստ ես՝ երբ կամենաս, իսկ
եթէ աղքատ ես՝ երբ կարողանաս:

Ա ս յ ն ը և է ր պ ա տ ե լ ը .

Ո՞ի մայր երկու զաւակ ունէր, ո-
րոնց հաւասար կերպով սիրում էր: Ո՞ի
օր անդրանիկը ասաց իր մօրը. մայրիկ,
գիտեմ որ դու ինձ շատ ես սիրում,

բայց չես կարող այնքան սիրել, որքան
ես քեզ սիրում եմ: — Ինչո՞ւ դու այդ-
պէս ես կարծում, որդեակ, մայրը նը-
րան հարցրեց: — Որովհետև դու երկու
զաւակ ունիս, իսկ ես միայն մի մայր:

S Է Ւ Ռ Ա Ռ Ո Ւ Ն Ե Վ Ա Ռ Ո Ւ Ն .

ՄԿՐՏԻՉ. Յովակիմ, Բ՞նչ էիր շի-
նում երեկ:

ՅՈՎ. Ոչինչ, ես շատ տիսուր էի:
ՄԿՐՏԻՉ. Ի՞նչի համար էիր տիսուր:
ՅՈՎ. Մենակ էի մնացել, այն
պատճառով:

ՄԿՐՏԻՉ. Ուրեմն քո միայնութեան
ժամանակ դու ինքդ ես եղել քո տրխ-
րութեան պատճառը:

ՅՈՎ. Ի՞նչ անեմ մենակ մնա-
ցած ժամանակս: Ես ի՞նչպէս անցկաց-
նեմ ժամանակը:

ՄԿՐՏԻՉ. Ժամանակի անց կենալու
հետ քո կեանքն էլ նրա հետ անց է
կենում: Ինչի՞ ես կամենում անբան,
անգործ զուր տեղը ժամանակը անց-
կացնել. միթէ չը գիտե՞ս, որ մեր կեան-
քը շատ կարճ է:

ՅՈՎ. Ի՞նչ պէտք է արած,
երեմն ժամանակը շատ երկարանում է:

ՄԿՐՏԻՉ. Եյդ բանի պատճառն այն
է, որ մենք չը գիտենք ժամանակի օ-
րինաւոր գործածելը:

ՅՈՎ. Եյդ Բ՞նչ ես ասում,
Բ՞նչ շինեմ ես այն ժամանակը, երբ
տանը միայն նստած եմ և սիրոս էլ
բան շինել չեմ ուզում:

ՄԿՐՏԻՉ. Մի բան վեր առ և գործի:

ՅՈՎ. Շատ ես լաւ հրամայում,
եթէ սէր ունենամ բան շինելու:

ՄԿՐՏԻՉ. Գլխաւոր բանը սկսեն է:

Որքան կարող ես շուտով և սրտով ըս-
կոէ բան շինել: Ե հարկէ առաջ փոքր
ինչ կը նեղանաս, բայց ոչինչ: Միրտդ
մի՛ կոտրի. քանի երկար գործես ու աշ-
խատես, այնքան գործդ կը թեթևանայ
և այնքան լաւ կը շինես: Այդպէս գոր-
ծով պարապած եղած ժամանակը այն-
պէս կ'անցկենայ, որ դու էլ չես իմանալ:
Բայց սիրտդ էլ կուրախանայ, որովհե-
տեւ գործ շինեցիր: Դու այս բանս մի
լաւ փորձէ և կը տեսնես, որ ճշմարիտ
է ասում քեզ քո Միրտիչ եղբայրը:
Միայն աշխատանքով և գործով կա-
րելի է տիսրութիւնը փախցնել:

Այս և լապուհեց.

Մի սաստիկ գիշերային մութ ժա-
մանակ մի կոյր մարդ ման էր գալիս

փողոցներում: «Եա ձեռքումը մի լապ-
տեր ունէր և ուսի վրայ մի կուժ ջրով
լիքը: Մի մարդ պատահելով նրան շատ
զարմացաւ, տեսնելով որ մի կոյր մարդ
ձեռքին լապտեր ունի: „Եյ իւղձ ո-
ղորմելի ասաց նրան, քո ինչի՞ն է պէտք
այդ լոյսը: Միթէ քեզ համար գիշեր
ու ցերեկը միւնոյնը չէ:»

— Ես այս լապտերը ինձ համար չեմ
բռնում, կոյրը նրան պատասխանեց,
այլ քեզ նման ցնորտածների համար,
որ չը գան չը խփվեն ինձ ու կուժս չը-
կոտրեն»:

Երեխայն և իր կողը.

Մի անգամ մի երեխայ փողոցումը
լաց էր լինում և բղաւում: Մի երի-
տասարդ նրան հարցրեց, որ այն տեղով

անցնում էր, թէ ինչո՞ւ համար ես լաց
լինում։ Ես մի փող եմ կորցրել, նա պա-
տասխանեց, որը մայրս էր ինձ տուել։
Լաւ է, ասաց նրան երիտասարդը, դը-
ժուար չէ այդ կորուստի առաջն առ-
նել. մի՛ լար, ահա ուրիշ փող։ Երեխան
վեր է առնում փողը, բայց մի քանի
րոպէից յետոյ դարձեալ սկսում է լաց
լինել և բղաւել։ — Ելի ինչո՞ւ համար ես
լաց լինում։ — Ես լաց եմ լինում, ո-
րովհետեւ միտք եմ անում այս բանս,
որ եթէ իմ փողս կորցրած չը լինէի,
այժմ երկու փող կունենայի։

Ե Է Ե Ն Ե Յ Ե .

Երբ որ դու մի գիւղ ես մտնում,
ամեն բանից առաջ ի՞նչ ես տեսնում։
— Եկեղեցին։ Եկեղեցին ամեն տներից

բարձր է շինած, այնպէս, որ նրա զան-
գակատումը շատ հեռուից կարող ես
տեսնել։ Եկեղեցին միւս տներից մեծ է
և նրանցից հեռու է շինած։ Նա միւս
տների նման չէ։ Ոչ մէկ տուն չէ մըտ-
նում գիւղի բոլոր ժողովուրդը, բայց
եկեղեցումը ամեն մարդ տեղ ունէ՝ մեծն
էլ, փոքրն էլ, հարուստն էլ, աղքատն
էլ, հիւանդն էլ, առողջն էլ։ Ամենքը
հաւասար են Աստուծու առաջը։

Քեզ երեխայ Ժամանակը եկեղեցումն
են մկրտել, եկեղեցումը կը պսակեն քեզ,
երբ կը մեծանաս։ Երբ մեռնես՝ նմանա-
պէս եկեղեցին կը տանեն քեզ և եկե-
ղեցու մօտ կը թաղեն քեզ։ Եկեղեցու
մօտ են լինում թաղած նմանապէս քո
հայրը, մայրը և պապերդ։

Ուրեմն եկեղեցին և հասարակ տները
միւնոյն չեն։ Հասարակ տանը դու կա-

լող ես բարեկամ էլ ոմնենալ, թշնամի
էլ: Բայց եկեղեցումը, Աստուծու տանը,
թշնամիներդ էլ իրանց սրտից հանում
են ոխը եւ ատելութիւնը, մոռանում են
չարութիւնը և բարեկամանում են քեզ
հետ:

Ճ ա ն ա ռ է հ ա ր տ

Մէկ հարուստ մարդ քաղաքիցը
դուրս մի ճանապարհի վրայ շատ մեծ
ու գեղեցիկ տուն էր շինել պալատի
նման. ոչինչ չէր ինայում այդ շինու-
թիւնը զարդարելու, բայց աղքատներին
ողորմութիւն չէր տալիս:

Մէկ անգամ մէկ խեղճ ծեր մարդ
դադրած եկաւ այդ շինութեան մօտ և
էլ ուժ չոնքենալով իր ճանապարհը շա-
րունակելու, ինդրեց այն հարուստին, որ

իրան իրաւոնք տայ այն գիշերը այն
տեղ քնելու: Նարուստը հպարտութիւ-
նով այն աղքատին պատասխան տուեց,
թէ իր տունը ոչ իջևան է և ոչ էլ
հիւրանոց: Օերը ասաց որ ուզում է
այն հարուստին երեք բան հարցնել և
խնդրեց որ նա պատասխան տայ:

Մեծատունը համաձայնեցաւ:

Օերը հարցրեց. „Ո՞վ էր քեզանից
առաջ այս տանը կենում:

— Իմ հայրը, պատասխան տուեց
մեծատունը:

— Քո հօրից առաջ:


— Իմ պապը:

— Իսկ քեզանից յետոյ ով պէտք
է կենայ այս տանը:

— Յոյս ունիմ, որ իմ որդիքը կե-
նան:

— Ուրեմն, ասաց ծերը, եթէ դուք

ամենքդ էլ այստեղ բնակվել էք միմեանցից յետոյ մի քանի տարի, ապա հիւրեր չեք դուք. ձեր տունն էլ իսկապէս հիւրանոց է և իջևան։ Մի՛ փչացնիլ անմեղ տեղը ահազին փողեր այս տանդ զարդարանքի վրայ, որ քեզ համար կարծ ժամանակուայ բնակարան պէտք է լինի. այլ օգնութիւն տուր չունեցող ներին և աղքատներին, Աստուած էլ քեզ կը վարձատրէ այն կեանքումը[“]։ Մեծատունը ամաչեց, այն գիշերը ձերին քնելու տեղ տուեց և այնուհետև օգնութիւն էր տալիս չքաւորներին։



ԵՐՐՈՐԴ ՄԵՍՆ

ՎԱՐԴՈՒՀՈՒ ԽԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻՐ ՄՈՐ ՀԵՅ.

Կամաց գիշելու է։

Վարդուհին արդէն լաւ էր կարդում, նա շատ աղօթքներ դիտէր, իմ ցոյց տուած երգերը մի քանի անգամ կարդացել էր. արդէն սկսել էր մեծ գըրգերից շատ բան սովորել. բայց ամենից աւելի իր մօր խօսակցութիւնից օգուտ քաղեց։ Վարդուհին երբ աշխատասէր և ունկնդիր էր լինում (թէև նա միշտ այդպէս էր), այն ժամանակը մայրը կանչում էր նրան իր մօտ և նրանք այսպէս էին խօսում։

Եւազն իսուակցութեան.

„Վարդուհի ջան, դու կարող ես
համարել:

— Կարող եմ:

— Մինչև քանիսը կարող ես հա-
մարել:

— Մինչև տասը:

— Շատ լաւ: Համարիր:

— Մէկ 1. Այց 6.

Երկու 2. Եօթը 7.

Երեք 3. Ութը 8.

Չորս 4. Տնն 9.

Հինգ 5. Տասը 10“.

— Շատ լաւ:

Երեսրտ իսուակցութեան.

„Վարդուհի, դու գիտե՞ս այսօր ինչ
օր է:

— Գիտեմ: Երկուշաբթի է:

— Իսկ էգուց ի՞նչ օր կը լինի:

— Երեքշաբթի:

— Իսկ էգուցից յետոյ:

— Չորեքշաբթի:

— Իսկ յետոյ:

— Հինգշաբթի:

— Իսկ հինգշաբթի օրից յետոյ:

— Ուրբաթ:

— Իսկ ուրբաթից յետոյ:

— Շաբաթ:

— Արջապէս, շաբաթից յետոյ:

— Կիւրակի:

— Վարդուհին կիւրակի օրը իր հօր
հետ կերթայ եկեղեցի և Աստուծուն ա-
զօթք կանեն: Եյն տեղ ինչպէս գե-
ղեցիկ է: Վարդուհին երբ կը մեծանայ,
նրան էլ կը տանեն եկեղեցի. բայց այդ
ժամանակը պէտք է շատ համեստ և
խոնարհ լինել“:

Վիւրակի օրը մեծ մայրը և մօրաքոյրը մեզ մօտ ձաշ կուտեն: Վիւրակի օրը երեխայքը չեն սովորիլ և շատ քաղցրեղէններ կը ստանան, եթէ արժանի են. կիւրակին շատ ուրախալի օր է:

— Իայց կիւրակի օրից յետոյ ո՞ր օրն է գալիս:

— Երկուշաբթի:

— Երկուշաբթին նորէն կը դառնայ և մէկ շաբաթ կը լինի: Այդ քանի՞օր է: Վարդուհի, համարիր մատներովդ:

— Երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, կիւրակէ. = Եօթն օր է:

— Եօթը օրը մէկ շաբաթ է“:

ԵՐԵՒԴԻ ԷՌԱԿԱՅՈՒՆԻՒՆ.

„Վարդուհի, դու արդէն գիտես մի

շաբաթը, ասա ինձ չորս շաբաթը ի՞նչ բան է:

— Աէկ ամիս է:

— Իսկ վեց ամիսը:

— Կէս տարի է:

— Իսկ տասներկու ամիսը:

— Աէկ տարի է:

— Իայց դու երեխ, դեռ չը գիտես ամիսների անումները:

— Չը գիտեմ, մայրիկ ջան:

— Ուրեմն լսիր, ես քեզ կը պատմեմ.

Յունվար, Փետրվար, Մարտ, Ապրիլ, Մայիս, Յունիս, Յուլիս, Օգոստոս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Կոյեմբեր, Դեկտեմբեր:

— Մայրիկ ջան, ես չեմ կարող միտքս բերել այդ բոլոր անումները:

— Սպասիր, Վարդուհի ջան, որ դու

աւելի հեշտ միտոդ բերես, ես քեզ ամեն ամսի վերայ մի բան կը պատմեմ:

Յունվար ամսումը շատ ցուրտ է: Փողոցումը սառնամնիք է և ձին. ծառերի վերայ տերևներ չեն լինում, այդումը ոչ ծաղիկներ են լինում և ոչ խոտ. մեղոնները և թրթուրները չեն երևում. գետերը սառչում են, որոնց վերայ մանուկները սահնակով վաղում են, վառարանները և օճախները վառում են: Վարդուհի ջան, կրակին մօտ մի՛ գալ, դու կարող ես տաքանալ և յետոյ մըրսիւ, բայց որ աւելի վատն է, դու կարող ես շորդ այրել:

Փետրվար ամսումը նոյնպէս ցուրտ է, բայց օրերը աւելի երկար են: Փետրվար ամսումը և Բարեկենդանն է. կուտենք գալթայ, որ դու շատ ես սիրում:

Մարտ ամսումը շատ անդամ ձին է գալիս և անձրւ, քամոտ օրեր և սաստիկ ցեխներ են լինում. Վարդուհին մեծ մօր մօտ չի դնալ, այլ տանը կը նստի: Վարդուհին կը խաղայ, Վարդուհին պար կը դայ իր եղբայրների հետ:

Կպրիւ ամսումը տաք է արդէն. արեգակը այրում է. թռչունները սկրսում են երգել. կանաչը երևում է: Վարդուհին իր հօր, մօր, եղբայրների և քրոջ հետ կառքով քաղաքից դուրս կերթայ:

Մայիս ամսումը արդէն ամեն տեղ գեղեցիկ է. բազմաթիւ ծաղիկներ են լինում, այդին շատ գեղեցիկ է լինում, դաշտերը, ծառերը և թռուփերը շատ սաստիկ կանաչում են: Ամեն համեստ երեխայքը գնում են զբոնելու:

Յունիս ամսումը վարդերը բացվում են: Վարդուհին իր մօր համար

ծաղկի փունջ կը բերէ: Յունիս ամսումը ելակ կուտենք, կարելի է թէ և բայն էլ:

Յուլիս ամսումը արդէն շատ դաշտազան պտուղներ են լինում:

Օգոստոս ամսումը խնձորները, տանձերը և գեղձերը համնում են: Վարդուհի ջան, երբէք խակ պտուղներ չուտես, որովհետեւ մանուկները շատ անգամ են հիւանդանում խակ պտուղ ուտելուց:

Սեպտեմբեր ամսումը շատ են լինում. տանձ, խնձոր, սալոր, ընկոյզ, սեխ և ձմերուկ: Երբ Պետրոսը և Յովհաննէսը կը մեծանան, նրանց համար փոքրիկ սանդուղ կը շինեն. նոքա սանդուղը ծառի մօտ կը դնեն և կը սկսեն խնձորներ քաղել: Վարդուհին և Խղիսաբէթը ծառի տակին կը սկսեն այդ

խնձորները ժողովել: Այս ժամանակը մենք շատ տանձեր կը քաղենք և կը չորացնենք, սալորներ կը ժողովենք, կը հրամայենք նրանցից շաքարի մէջ ծուծը եփել և այդ ծուծը Վարդուհին կը սկսի սպիտակ հացով ուտել:

Հոկտեմբեր ամսումը ցուրտը դարձեալ կը սկսի: Տաք օրեր էլ կը լինեն, բայց շատ քիչ: Այդին կը դարտակվի, ծառի տերևները կը դեղնեն և կը թափվեն, խոտը նոյնպէս կը դեղնի, ծաղիկները կը թառամնն և կսկսի անձրև գալ:

Վոյեմբեր ամսումը ցուրտ է և տիսուր: Բայց Վոյեմբեր ամսումն է Վարդուհու ծննդեան օրը: Իր մօրաքոյրը նրան պատկերազարդ գիրք կ'ընծայէ: Մենք կը նստենք սեղանի շուրջը, Յովհաննէսը վառարանը և ճրագները կը վառի և մենք կսկսենք նայել պատկերները:

Դեկտեմբեր ամսումը սաստիկ ցուրտ է լինում։ Վարդուհու համար տաք կը լինի, որովհետեւ նա տաք սալող ունի և վառարաններն էլ ամեն օր կը վառեն։ Բայց միթէ ամենի համար տաք է։ Եյնպիսի խեղճ մանուկներ կան, որոնց շորերը պատուտած են, իսկ ծնողները փայտ չունեն. այդ մանուկների համար շատ ցուրտ է։

— Մայրիկ ջան, երբ ես կը մեծանամ և ինձ համար փող կունենամ, այն ժամանակը շորի և փայտի համար ես այն մանուկներին փող կը տամ — և նըրանց համար էլ տաք կը լինի։

Զորբորդ իւսակցութեան.

”Վարդուհի ջան, դու արդէն գիտես, որ տարին տասներկու ամիս ունի,

բայց գիտե՞ս տարին քանի շաբաթ՝ ունի։

— Չը գիտեմ։

— Յիսունեւերկու շաբաթ։

Տարին նոյնպէս չորս եղանակ ունի. գարունք, ամառ, աշունք և ձմեռ։ Ձմեռից յետոյ գալիս է գարունքը և մարտի կիսից սկսած շարունակվում է մինչև յունիսի կէսը։

Եմառը սկսվում է յունիսի կէսից և շարունակվում է մինչև սեպտեմբերի կէսը։

Եշունքը սկսվում է սեպտեմբերի կէսից և շաբանակվում է մինչև դեկտեմբերի կէսը։

Ձմեռը սկսվում է դեկտեմբերի կէսից և շարունակվում է մինչև մարտի կէսը։

Գարունքուայ ժամանակը ամեն բան գեղեցիկ է, նոր է, պարզ է և կանանչ։

տարուայ այդ ժամանակը շատ ծաղիկ-ներ կան:

Դարունքը փոքր երեխայի նման է, զոր օրինակ Վարդուհու նման է:

Ամառը, թէպէտ և նոյնպէս ամեն բան գեղեցիկ է, բայց սաստիկ շոքեր են լինում, իսկ քիչ ծաղիկներ. պտուղների առատութիւն է:

Աշունքը արդէն այնքան լաւ չէ. ցուրտը սկսվում է, ծաղիկները քըշանում են, իսկ պտուղների և հացի առատութիւն է:

Աշունքը ծեր մարդու նման է, ինչպէս, զոր օրինակ, մեր մեծ մօր նման է:

Չմեռը սառնամանիք է լինում, ձիւն է գալիս և ցուրտ է. բայց այդ ժամանակը կառավարվում են նորանով, ինչ որ ժողովել են տարուայ ուրիշ ժամանակներում: Չմեռը սաստիկ ծեր մար-

դու նման է, ինչպէս զոր օրինակ ապուպալին:

Տարուայ վերջին օրը դեկտեմբերի 31-ն է, իսկ առաջին օրը յունվարի 1-ն է, և սովորաբար Կաղանդ է կոչվում:

— Ո՞չ, մայրիկ ջան, ես սիրում եմ այդ օրը, որովհետեւ ամենքը շնորհաւորում են միմեանց, մենք քաղցրեղէններ կը ստանանք, երբեմն իմ հայրս և փողէլ է ընծայում:

Հնագերու իսուսնացունեն:

— Մայրիկ ջան, տարին քանի՞ օր ունի:

— Տարին առհասարակ երեքհարիւր վաթսուն և հինգ օր ունի, իսկ իւրաքանչիւր երեք տարին մի անգամ՝ երեքհարիւր վաթսուն և վեց, և այդ տարին նահանջ է կոչվում:

— Խակ ամիսը քանի՞ օր ունի:
— Ամենամեծ ամիսը 31 օր ունի, իսկ
ամենափոքրը 28 օր:
— Մայրիկ ջան, պատմիր ինձ այդ,
ես կը սովորեմ:
— Յունվարը 31 օր ունի:
— Փետրվարը 28 օր ունի, բայց ա-
մեն 3 տարին մի անգամ 29 օր:
— Մարտը 31 օր ունի:
— Կողիլը 30 օր ունի:
— Մայիսը 31 օր ունի:
— Յունիսը 30 օր ունի:
— Յուլիսը 31 օր ունի:
— Օգոստոսը 31 օր ունի:
— Սեպտեմբերը 30 օր ունի:
— Հոկտեմբերը 31 օր ունի:
— Սոյեմբերը 30 օր ունի:
— Դեկտեմբերը 31 օր ունի:

Վէյերորդ խօսակցութեան.
„Խակ դու զիտե՞ս, Վարդուհի, թէ
օրը քանի մասն ունի:
— Չը զիտեմ:
— Օրը, ինչպէս և տարին, չորս
մասն ունի:
— Կոքա ի՞նչպէս են կոչվում:
— Ըռաւօտ, կէս օր, երեկոյ և զիշեր:
Ըռաւօտը սկսվում է արեկի ծագե-
լոց յետոյ, այդ ամենալաւ ժամանակն
է պարապելու, սովորելու և աշխատան-
քի համար, և դա աւելի երկար է:
Կէս օր է կոչվում այն ժամանակը,
երբ արեգակը կանգնած է համարեալ թէ
մեր գլուխների վերև:
Երեկոյն սկսվում է այն ժամանակը,
երբ արեգակը մօտենում է մայր մըտ-
նելու. այդ զրօննելու ժամանակն է:

Վիշեր է կոչվում այն ժամանակը,
երբ բոլորովին մուլթն է. այդ հանգըս-
տանալու և քնելու ժամանակն է:

Իսյց այդ ժամանակները ամբողջ
տարին միանման չեն. գարունքուայ և
ամառուայ ժամանակը գիշերները աւելի
կարծ են, իսկ աշունքուայ և ձմեռուայ
ժամանակը շատ երկար են:

— Մայրիկ, այդ նրանից է, որ երբ
դուրսը տաք է և գեղեցիկ, այն ժա-
մանակը և երկար է երեսում. իսկ երբ
ցուրտ է և զզվելի, այն ժամանակը և
մուլթը աւելի երկար է: Ո՞չ, ես ամենից
շատ սիրում եմ գարունքը և ամառը
քան թէ ձմեռը»:

Եթներորդ խօսակցութեան.

„Ապրդուհի, դու գիտե՞ս թէ ցե-

րեկը և գիշերը ի միասին ինչ են կոչ-
վում:

— Օրագիշեր:

— Իսկ օրագիշերը քանի՞ ժամ ունի:

— Չը գիտեմ:

— Երկու անգամ տասներկու, ու-
րեմն քսանեչորս. օրագիշերները համար-
վում են գիշերուայ ժամը 12-ից:

Գիշերուայ ժամանակը ժամի տասն
և երկուսին կոչվում է կէս գիշեր, ցե-
րեկը ժամի տասներկուսին—կէս օր:

Ով որ ժամացոյց ունի և ով որ
գիտէ համարել, նա միշտ կիմանայ թէ
որ ժամն է:

Եռաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ,
հինգերորդ, վեցերորդ, եօթներորդ, ու-
թերորդ, իններորդ, տասներորդ, տասն-
ևմիերորդ, տասներկուերորդ:

Ժամացոյցի վերայ միայն նշակած է

12 և աւելի պէտք չէ, որովհետև երկու
անգամ տասներկուսը 24 կը լինի:

Եմն ժամ բաժանվում է կէս ժա-
մեր, քառորդներ և բոպէներ:

Ո՞ի ժամը երկու կէս ժամ ունի:

Կէս ժամը երկու քառորդ ունի:

Քառորդը 15 բոպէ ունի:

Եմբողջ ժամը չորս քառորդ, կամ
վախտուն բոպէ ունի:

— Այսրիկ ջան, երանի թէ ես կա-
րողանայի իմանալ, թէ ո՞ր ժամն է;

— Ես քեզ կը սովորեցնեմ, միայն
թէ ուշադրութեամբ լսիր: Եհա իմ ժա-
մացոյցս: Լաւ նայիր: Տեսնո՞ւմ ես այդ
երկու սլաքները. որը երկար է, այն ցոյց
է տալիս կէս ժամերը, քառորդները և
բոպէները. որը կարճ է, այն ցոյց է տա-
լիս ժամերը:

Լաւ նայիր թուանշանների վերայ.

այստեղ 12 հատ թուանշան կայ. հենց
այնքան, որքան ժամ կայ: I-ից մինչ
II-դը հինգ բոպէ կը լինի: III-նշւ կարճ
սլաքը պտոյտ կը գայ այդ փոքրիկ կը-
տորը, այդ ժամանակը մեծ սլաքը պը-
տոյտ կը գայ բոլոր շրջանը, վախտուն
բոպէ: Երբ մեծ սլաքը I թուանշանի
վերայ կը լինի, այն ժամանակը հինգ
բոպէ կը լինի:

Երբ երկար սլաքը II թուանշանի
վերայ կը լինի, այն ժամանակը տասը
բոպէ կը լինի:

Երբ III թուանշանի վերայ կը լինի,
այն ժամանակը տասնեհինգ բոպէ կամ
քառորդ ժամ կը լինի:

Երբ IV թուանշանի վերայ կը լինի,
այն ժամանակը քսան բոպէ կը լինի:

Երբ V թուանշանի վերայ կը լինի,
այդ ժամանակը քսանեհինգ բոպէ կլինի:

Երբ VI թուանշանի վերայ կը լինի,
այդ ժամանակը երեսուն րոպէ, կամ
կէս ժամ կը լինի:

Երբ VII թուանշանի վերայ կը լինի,
այն ժամանակը երեսունեհինգ րոպէ կը
լինի:

Երբ VIII թուանշանի վերայ կը լինի,
այն ժամանակը քառասուն րոպէ կը լինի:

Երբ IX թուանշանի վերայ կը լինի,
այն ժամանակը քառասունեհինգ րոպէ
կամ երեք քառորդ ժամ կը լինի:

Երբ X թուանշանի վերայ կը լինի,
այն ժամանակը յիսուն րոպէ կը լինի:

Երբ XI թուանշանի վերայ կը լինի,
այն ժամանակը յիսունեհինգ րոպէ կը
լինի:

Երբ XII թուանշանի վերայ կը լինի,
այն ժամանակը վաթսուն րոպէ, կամ
մէկ ժամ կը լինի:

Երկար սլաքը ուր կը լինի, միշտ
նշանակիր և կիմանաս, երբ է քառորդ
ժամ, երբ է կէս ժամ, մի խօսքով,
քանի րոպէ է: Յետոյ նայիր, թէ ո՞ւր
է կարճ սլաքը—և դու կը հասկանաս,
թէ որ ժամն է:

— Ճիմի երկար սլաքը VI թուա-
նշանի վերայ է ուրեմն կէս ժամ է. իսկ
կարճ սլաքը II և III թուանշանների
մէջ տեղն է, ուրեմն երկու և կէս ժա-
մըն է:

— Եյդպէս է, բայց ասում են. „Ե-
րեքի կէմն է“: Երբոր Ապրդուհին լաւ
կը հասկանայ ժամացոյցի որպիսութիւ-
նը և իր իսաղալիքները չի փչացնիլ, այն
ժամանակը շատ կարելի թէ—իր հայրը
նրա համար երբ և իցէ մի փոքրիկ ժա-
մացոյց կը զնէ:

Ա-ՌԵՐԵՐԵՐ ՔԱՅԱԿԵՐԵՐ-ՌԵՐ .

— Երդէն մօտ վեց հազար տարի է,
որ Եստուած ոչընչից ստեղծեց Երկինքը
և Երկիրը:

Երկիրս շատ մեծ է և բոլորակ. Նրա
վերայ շատ ջուր կայ, որ կոչվում է
ծով, ի՞նչ և գետ:

Բոլոր երկիրս հինգ մասն ունի: Վարդուհի, դու ցանկանո՞ւմ ես խմանալ, թէ այդ մասերը ի՞նչ անուններ ունին:

— Պատմեցէք, մայրիկ ջան:

— Եւրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Կոլունդիա կամ Աստրաւիա:

— Երկար, շատ երկար ժամանակ
մարդիկը էնպէս էին կարծում, որ մի-
այն երեք ցամաք կայ. Եւրոպա, Ասիա
և Աֆրիկա:

Բայց 1492 թուին Խաչատուր Կօ-
լումբոսը նաւով ծովի վերայ ման գա-
լով գտաւ չորրորդ ցամաքը և նրան Ե-
մերիկա կոչեցին:

Սօսիկ ժամանակներս գտան հինգ-
երորդ ցամաքը, որը Նոր Հոլլանդիա
կամ Աւստրալիա է կոչվում:

Եւրոպան, Եսիան և Եփրիկան կոչ-
վում են հին երկիր. բայց Ամերիկան և
Կոստրալիան — ‘Սոր Երկիր’:

Եստուած այնքան գեղեցիկ առարկաներ է ստեղծել, որ մարդիկը այսքանի հազար տարի միջոցում դեռ չեն կարողացել իմանալ: Ով որ ինչքան շատ սովորեր, երբեք ամենը չի իմանալ և այդ պատճառով երբեք ոչ ոք չը պէտք է ասի, որ ամեն բան գիտէ:

Ի՞ննէրորդ խօսակցութեան.

- „Վարդուհի, քանի՞ ձեռք ունես:
 —Երկու:
 —Վմեն ձեռքի վերայ քանի՞ մատ-
 ներ ունես:
 —Չը գիտեմ, մայրիկ ջան:
 —Համարիր:
 —Մէկ, երկու, երեք, չորս, հինգ.
 —Հինգ մատն է:
 —Իսկ այդ ձեռքի անունն ի՞նչ է:
 —Եջ:
 —Իսկ երկրորդի՞նը:
 —Չափ:
 —Վարդուհին աջ ձեռքովը երեսը
 խաչակնքում է, բռնում է զգալ, վերց-
 նում է զրիչ: Իսկ ո՞ւր է աջ ոտղ:
 —Եհա՛:
 —Իսկ ձախ ոտղ ո՞ւր է:

- Եհա այս է:
 —Վարդուհի, ջան քանի՞ ոտներ
 ունես:
 —Երկու:
 —Իսկ քանի՞ ոտներ ունեն շունը,
 կատուն և ձին:
 —Չորս, չորս:
 —Իսկ զեղձանի՞լը և հաւի ձա՞զը:
 —Երկու, երկու:
 —Վմեն թռչունները երկու երկու
 ոտք ունեն, բայց թռչունները բաց ի
 ոտքերից և թռեր ունեն, այդ պատճա-
 ռով նոքա թռչում են:
 —Վարդուհի ջան, դու տեսել ես
 այն կենդանիներին, որոնք ման են գալիս
 ջրի մէջը:
 —Տեսել եմ, մայրիկ ջան, այդ
 ձուկն է:
 —Չկները ոչ ոտքեր ունին և ոչ

թեկը. բայց նոքա շնչառութեան ա-
կանջներ և լողալու թեկը ունին. այդ
է պատճառը, որ նոքա և լողանում են:

Աստուած նոցա այնպէս է ստեղծել,
որ նոքա կարող են ապրիլ և ջրի մէջը:
— Վարդուհի ջան, ի՞նչ է պատ-
ճառը, որ դու էլ դեղձանիկի պէս չես
թռչում:

— Որովհետեւ ես թեկը չոնիմ:

Ինչո՞ւ համար Վարդուհին չէ լողա-
նում և չի կարողանում ջրում ապրիլ:
— Որովհետեւ Վարդուհին ձուկը չէ
և նա չոնի ո՛չ շնչառութեան ականջ-
ներ և ոչ լողալու թեկը:

— Եյ՛, Վարդուհին չէ թռչում,
չէ լողանում, բայց Վարդուհին խօսում
է և ինչ որ ասում են նա հասկանում
է. իսկ այդպէս չեն կարող անել ո՛չ ձու-
կը և ոչ թռչունը:

Վարդուհին խելօք է ամեն կենդա-
նիներից: Վարդուհին գիտէ, որ կայ
Աստուած, Որն որ բոլորը ստեղծել է
և ամենքի վերայ նախախնամում է:
Վարդուհին գիտէ, որ Աստուծուն, մօրը
և հօրը պէտք սիրել. որ պէտք է բարի
և հնազանդ լինել. իսկ կենդանիները
այդ բաները չը գիտեն. և եթէ նրանց
սկսեն այդ բաները սովորեցնել, նրանք
բոլորովին չեն հասկանալ:

— Վարդուհի, դու գիտե՞ս, թէ դու
ի՞նչ ես:

Դու մարդ ես. իսկ մարդը — ամ-
բողջ աշխարհում ամենից լաւ արա-
րածն է:

Մինչդեռ մարդը փոքր է, նրան ե-
րեխայ են կոչում:

Վարդուհի, դու դեռ փոքր ես և
այդ պատճառով քեզ երեխայ են կո-

չում: Երեխան ոչինչ չը գիտէ. Նրան
պէտք ամեն բան սովորեցնեն. ուրեմն
նա պէտք է լսի մեծերին:

Պետրոսը մանուկ է, իսկ Ալարդու-
հին աղջիկ է. Երբ Պետրոսը կը մեծա-
նայ, Նրան մարդ կը կոչեն, իսկ Ալար-
դուհիին — կին:

Մանուկը պէտք է շատ սովորի և
նա պէտք է ուժեղ և աներկիւղ լինի.
աղջիկն էլ պէտք սովորի, բայց նա պէտք
է և աշխատել գիտենայ. միւնոյն ժա-
մանսակը նա պարտական է բարի, հեղ
և խոնարհ լինել:

Բայց գիտե՞ս, Ալարդուհի ջան, թէ
ինչու մարդս աւելի գերազանց է և կա-
տարեալ միւս կենդանիներից, թէ ի՞նչ
է պատճառը, որ նա խօսում է և ինչ
որ ասում է՝ հասկանում է:

Ալարդս միւս կենդանիներից այն

պատճառով է կատարեալ և գերազանց,
որ Աստուած նրան տուել է հոգի, որը
չունին ո՛չ ձիաները, ո՛չ թռչունները և
ո՛չ էլ ձկները:

Բայց ինչո՞ւ է մարդուս հոգի տուել
Աստուած:

Որ նրան պաշտի, սիրի և բարի լինի:
Պաշտիր, Ալարդուհի ջան, Աստու-
ծուն, սիրիր բոլոր մարդկանց, մանա-
ւանդ մօրդ, հօրդ, եղբայրներիդ և քոյ-
րերիդ և բարի եղիր: Եթէ ոչ, ինչո՞ւ
կը ծառայի քեզ հոգիդ:

Տառներորդ խօսակցութեան.

— Ալարդուհի ջան, տեսե՞լ ես հօրդ
բռնած գեղձանիկը: Խեղձը սատկեց, ար-
դէն կենդանի չէ:

Յովհաննէսը նրան պարտիզի մէջը
թաղեց, նա փթռում է գետնի մէջ և
նրանից ոչինչ չի մնալ:

Նյօր մի մեռեալ էին տանում
դագաղով. դու հարցրիր, թէ ի՞նչ բան
է մեռեալ:

Մեռեալը—այդ մարդ է, որ չի կա-
րողանում ման գալ և ո՛չ էլ շարժվիլ,
ո՛չ ուտել և անկեանք դրված է:

Ա երջնում են նրան, գնում են դա-
գաղումը — որ մի փայտեայ արկղ է,
տանում են և թաղում են հողի մէջ:

Ի այց նա բոլորովին չի ոչընչանալ,
ինչպէս գեղձանիկը, որովհետեւ նա կա-
տարեալ է գեղձանիկից և բոլոր կեն-
դանիներից:

Ա արդուհին գիտէ, որ մարդս մի
այնպիսի հոգի ունի, որը ո՛չ գեղձանի-
կը ունի և ո՛չ կենդանիները:

Եթէ մարդս մեռնում է, նրա մար-
մինը մնում է երկրումն, իսկ հոգին
թռչում է բարձր և այնտեղ կապրի
միշտ և յաւիտեան: Վարմինը մենք
տեսնում ենք, բայց հոգուն չենք տես-
նում, որովհետեւ նրան չի կարելի տեսնել:

Շատ բաներ կան, որ մենք չենք
տեսնում:

Կ այիր, Վարդուհի ջան, մայրդ
փչում է քո երեսիդ:

Ի բաւի, դու զզացիր քամի, մինչեւ
անգամ քո մազերդ շարժվեցան, բայց
դու չը տեսար մօրդ նչառութիւնը:

Հոգուն նոյնպէս չի կարելի տեսնել:

Կ ա մեր մէջն է, մենք նրան զգում
ենք, նա դուքս է գալիս մարմնի մի-
ջից, բայց ոչ ոք նրան չի տեսնում:

Վ մեն մարդ հոգի ունի, և այդ հո-
գին երբեկցէ կը թռչէ ամենից, այսինքն

ամենքս էլ կը մեռնիք իր ժամանակը:
Իայց ով որ պաշտել է Աստուծուն,
սիրել է իր հօրը, մօրը և լսել է մե-
ծերին ու եղբայրների հետ չի կռվել—
նրա հոգին ուղղակի Աստուծոյ մօտ կը
թռչի և նա այնտեղ ազատ և ուրախ
կը լինի:

— Ո՞հ, մայրիկ ջան, ես Աստուծուն
կը պաշտեմ, կը սիրեմ և կը լսեմ հօրս
և մօրս, կը յարգեմ մեծերուս, եղբայր-
ներիս և քոյրերիս հետ երբէք չեմ կըռ-
փիլ և հնազանդ ու բարի կը լինեմ:

— Երբ կը մեծանաս, արդէն կը ծե-
րանաս և կը մեռնիս, այն ժամանակը
քո հոգիդ կը թռչի Աստուծու մօտ և
այնտեղ նա հանգիստ կը լինի, քան թէ
այստեղ: Աստուծած քեզ կը սիրէ այնոր
համար, որ դու Նրա քեզ տուած հո-
գուն չես ապականել:

Որովհետեւ բոլոր չար մարդիկ ապա-
կանում են և կործնում են իրանց հո-
գին և Աստուծած նրանց չի սիրում:

Տառանելէլրոր խօսակցունին.

— Մայրիկ ջան, երեկ ես տեսայ՝
նոքա, որոնք գնում էին մեռելի ետեից,
սաստիկ լաց էին լինում. այդ ընչիցն է:

— Մի՞տքդ է, Վարդուհի ջան, որ
Կախիջւանումը մի օտար ծեր կին կար:

— Այո՛, միտքս է, նա ինձ համար
գեղեցիկ թաշկինակներ բերեց և ինձ
միշտ քաղցրեղէներ էր ընծայում:

— Դոկ մի՞տքդ է, երբ որ նա գնաց:
Եկաւ մեզ մօտ, մնաս բարեաւ ասաց
մեզ. իսկ երբ գնաց՝ մենք բոլորս լաց
եղանք:

— Արտքս է, մայրիկ ջան, և ես էլ
լաց եղայ:

— Եւ այն մարդն էլ, որը մեռաւ,
շատ հեռու Ճանապարհ գնաց: Նրա ե-
րեխայքը, քոյրերը և եղբայրները ուշ
կը տեսնեն նրան, միայն այն ժամանա-
կը, երբ իրանք կը մեռնեն — ահա թէ
ընչու համար էին նոքա այդպէս լաց
լինում:

Տառներին-Երրորդ Խօսակցութիւն.

— Վարդուհի ջան, մի՞տքդ է, թէ
Կստուած ինչու համար է քեզ հոգի
տուել:

— Որ ես նրան սիրեի և բարի լինէի:

— Ռայց գիտե՞ս, թէ ինչ է նշա-
նակում Կստուծուն սիրել:

— Չը գիտեմ, մայրիկ ջան:

— Կստուծուն սիրել — կը նշանակէ.
Նրան աղօթք անել, չորհակալովթիւն
անել Նրան ամեն բանի համար, ինչ որ
ուղարկում է մեզ համար և երբէք այն-
պիսի բան չը գործել, որ Նրան հակա-
ռակ լինի, այսինքն վատ բան չը պէտք
է գործել:

Աթէ Վարդուհին մի վատ բան է
անում, այն ժամանակը մայրը կարծում
է, որ Վարդուհին Նրան չէ սիրում:
Հենց այսպէս է կարծում Կստուած էլ:
Իսկ Կստուծուն պէտք է անպատճառ
պաշտել և յարգել:

Կա է ստեղծել երկինքը, երկիրը,
կենդանիները, ծառերը, ծաղիկները և ա-
մեն բան. Կա է ստեղծել մարդուս և ու-
ղարկում է Նրան ամեն բան: Կա աւելի լաւ
է և աւելի կատարեալ է բոլոր մարդիկ-
ներից — ի՞նչպէս կարելի է չը սիրել Նրան:

— Այսինք ջան, ես շատ եմ սիրում Աստուծուն:

— Շատ լաւ ես անում, բայց Աստուած երբէք չի հաւատալ, որ դու Նրան սիրում ես, եթէ միշտ բարի և հնազանդ չես լինիլ:

Ապրդուհի ջան, դու պէտք է իմանաս, որ Աստուած ամեն բան տեսնում է, որքան մուժ լինի սենեակը, որ անկիւնում էլ լինիս դու. իսկ եթէ դու մի վատ բան գործես, այն ժամանակ կը պատժի և էլ չի սիրիլ քեզ:

Ապրդուհի ջան, միշտ բարի և հնազանդ եղիր. ամեն բանում լսիր մօրդ, հօրդ և մեծերուդ և եթէ միայնակ մընաս, երբէք վատ բան մի գործիր. յիշիր՝ որ Աստուած միշտ նայում է քո վերայ, որ դու նրան սիրում ես և որ Նա քեզ պէտք է սիրէ:

Տառանելու+երրորդ Էտապիցուն-Ավան.

— Ապրդուհի ջան, այժմ կուզե՞ս, ես քեզ պատմեմ, թէ ինչ կը նշանակէ բարի լինել:

— Պատմեցէք, մայրիկ ջան:

— Ռարի լինել կը նշանակէ վատ բան չը գործել, իսկ ընդհակառակն, միայն բարի բան գործել: «Յախ» ես քեզ կը պատմեմ, թէ ինչպէս վատ չը գործել: «Յախ և առաջ Ապրդուհին երբէք չը պէտք է սուտ խօսի, այսինքն չը պէտք է ասի այն բանը, ինչ որ չի եղել, իսկ նոյնպէս պէտք է լոի այն բանում, ինչ որ գործել է, որովհետև Աստուած կը պատժի ստութեան համար:

Յետոյ Ապրդուհին ոչ ոքի վրայ չը պէտք գանգատվի. ոչ եղբայրների, ոչ քրոջ և ոչ ծառայների վրայ. նա ոչ ոքի հետ գործ չունի:

Աւրդուհին ոչ ոքի վրայ չը պէտք
է բարկանայ, մանաւանդ իր մօր կամ
հօր վրայ: Աւրդուհուց ոչ ոք չի վա-
խենում:

Աւրդուհին չը պէտք է լինի կա-
մակոր ոչ մարդիկների դէմ և ոչ կեն-
դանիների դէմ, որովհետեւ որ Աւրդու-
հուն էլ հաճելի չէր լինիլ, եթէ ուրիշ
նրա դէմ կամակոր լինէր և նրա հա-
կառակ բան գործէր:

Աւրդուհին չը պէտք է խլի եղ-
բայրներից խաղալիքները, չը պէտք է
ծեծէ և բրժէ եղբայրներուն, թէև հա-
նաքով էլ լինի. որովհետեւ քոյրը պար-
տաւոր է նրանց սիրել:

Աւրդուհին չը պէտք է լայ և ծովի
երբ նրան լողացնում են և հաղցնում
են, երբ նրան չեն տալի այն բանը, ինչ
որ նա կամենում է և մինչեւ անգամ

երբ որ վար կընկնէ, որովհետեւ լացը չի
օգնիլ: Միայն վատ կրթված երեխայրն
են ամեն բանի համար լաց լինում և
այդպիսի երեխայներին վատ երեխայր են
կոչում, իսկ այդ անունը շատ վատ է:

Աւրդուհին երբէք չը պէտք է ձեռք
կպցնի այն բանին, որը նրան չեն հրա-
մայում, իսկ նոյնպէս չը պէտք է ուտի
այն բանը, որը նրան չեն հրամայում,
որովհետեւ նա անհնազանդ կը լինէր,
իսկ Եստուած չի սիրում անհնազանդ
երեխայներին:

Աւրդուհին չը պէտք է խնդրի ոչ
հաց, ոչ շաքար, ոչ քաղցրեղէն և ո-
չինչ, որովհետեւ խնդրելը վատ բան է.
այն երեխայներին, որոնք ամեն բան
խնդրում են, սովորաբար ոչինչ չեն
տալիս:

Աւրդուհին չը պէտք է ուտի և

իսմի, երբ նա չէ կամենում, թէև շատ
համեղ քաղցրեղէն ևս առաջարկեն նը-
րան, որովհետեւ կենդանիները ևս այդ-
պէս չեն անում. իսկ Վարդուհին գիտէ,
որ մարդը կենդանիներից աւելի լաւ է,
նշանակում է, որ նա պարտաւոր է
նրանցից աւելի լաւ լինել:

Վարդուհի ջան, եթէ դու այս իր-
րատներից մէկին հակառակ վարվես,
վատ կանես և այն ժամանակ Աստուած-
քեղ չի սիրել:

Տառապութերութ խօսակցութեան.

— Վարդուհի ջան, այժմ լսիր թէ
ինչպէս պէտք է բարութիւն գործել:

Ամեն օր, առաւօտեան և երեկոյեան
դու պէտք ուշադրութեամբ և ջերմե-
ռանդութեամբ աղօթք անես, որովհե-

տեւ Աստուծոյ մօտ ամեն բան կայ, ինչ
որ Նա տալիս է մեզ. ուրեմն Նրան
պէտք է լաւ ինդրենք և ուղիղ սրտով
շնորհակալութիւն անենք Նրանից:

Դու պէտք է հնազանդ լինես հօրդ,
մօրդ, մեծ մօրդ և մեծերիդ ամեն բա-
նում և այն բոպէին, որովհետեւ նրանք
շատ իւելք ունին և նրանք աւելի լաւ
գիտեն թէ որ բանն է օգտաւէտ Վար-
դուհու համար:

Դու պէտք է ուղիղ սրտով սիրես
հօրդ և մօրդ, յարգես նրանց և իսկոյն
վազես՝ եթէ կանչեն, և կատարես նոցա
կամքը. որովհետեւ հայրդ և մայրդ շատ
բարի աչքով են նայում քեզ վերայ:

Վարդուհուն այնպէս ոչ ոք չէ սի-
րում, ինչպէս նոքա. և Աստուած էլ
է ասել, որ այն երեխայքը, որոնք կը
յարգեն և կը սիրեն իրանց հօրը և մօ-

ըր, շատ կապրեն և բաղդաւոր կլինեն:

պէտք է սիրով խաղաս եղբայրներիդ և քրոջդ հետ և նրանց ո՛չ մի վատ բան չը սորվեցնես։ Ալարդուհին նրանցից մեծ է. և եթէ նա բարի և բարոյական չի լինիլ, այն ժամանակը և նրա եղբայրները ու քոյրն էլ այդպէս կը լինին. իսկ Վատուած այդ բանի մասին կը պատժի Ալարդուհուն։

Եթէ մի ոք մին քեզ վերայ երախտիք ունենայ կամ թէ քեզ բարուվթին արած լինի, պէտք է սիրով շնորհակալութիւն անես. ամեն բան պէտք է քաղաքավարութեամբ ինդրել, որովհետեւ Ալարդուհին սեփական ծառայներ չունի, նա չի կարող ոչինչ տալ — նա թող գոնէ շնորհակալութիւն անի և սիրով ինդրի։

Պարտաւոր է ուշադրութիւնով սո-

վորել, որ մի բան գիտենայ և ի զուրիր մօրը չը չարչարի։ Խակ դու չը գիտես, թէ ի՞նչպիսի չարչարանք է մի ոք մինի բան սովորեցնելը։ Եւ մի՞թէ մենք չը պէտք է շնորհակալ լինենք և չը պէտք է յարգենք նրան, ով մեզ սովորեցնում է և ինչպէս ամօթ է այն օրիորդին, որի վերայ հոգս են քաշում, իսկ նա ոչինչ չը գիտէ։

Դու պէտք է շատ և լաւ աշխատես, որովհետեւ օրիորդը պարտաւոր է աշխատասէր լինել։ ‘Ծոյլերը՝ որոնք չեն աշխատում — հաց չունեն։ Վատուած Ինքը հրամայել է ամենքին աշխատել։’

Դու պարտաւոր ես պահել քո շորդ, գրքերդ և խաղալիքներդ. դու չը պէտք է կորցնես ոչ ձեռնոցներդ և ոչ թաշկենակներդ. քո ունեցածը քեզ բաւական կը լինի երկար ժամանակ, իսկ

հայրդ շատ փող կունենայ աղքատների
համար, աղքատներ էլ շատ կան աշ-
խարհքումը:

Ամեն բան, ինչ որ կը ստանաս,
պէտք է բաժանես եղբայրներիդ և քը-
րոջդ հետ, որովհետեւ ոչ ոք չէ սիրում
նրան, որը պահում է ամեն լաւ բա-
ները իր համար, իսկ ոչ ոքին ոչինչ
չէ տալիս:

Եթէ դու փող ունենաս, պէտք է
ողորմութիւն տաս աղքատներին, որով-
հետեւ Աստուած սաստիկ սիրում է այն
երեխայներին, որոնք ողորմութիւն են
տալիս աղքատներին:

Վերջապէս դու պարտաւոր ես ա-
մենքի հետ բարի և քաղցր լինել, ոչ
ոքին չը զզվեցնել և ամենքին յարգել:

Եթէ այդ ամենը կը կատարես,
Վարդուհի ջան, նշանակում է լաւ կա-

նես. և քանի որ երկրիս վրայ կապրես,
դու հանգիստ և ուրախ կը լինես և
Աստուած քեզ կը սիրէ. հայրդ, մայրդ
և մեծ մայրդ քեզ կը սիրեն. իսկ երբ
կը մեծանաս և կը մեռնես, այն ժա-
մանակը քու հոգին այն կեանքումը խա-
ղաղ կը լինի երկնքումը, Աստուածու մօտ:

Տառաշնչնիւրորդ իօսակյունիւն.

— Վարդուհի ջան, մի՞տքդ է, թէ
քանի ժամանակ է, որ ստեղծված է
աշխարհս:

Ո՞իտքս է. մօտ վեց հազար տարի է:

— Բայց գիտե՞ս, թէ մենք ինչո՞ւ
ենք ասում, որ այժմ 1874 ամսն է (կամ
ներկայ տարին):

— Չը գիտեմ:

— Որովհետեւ արդէն այսքան տարի

Է Վրիստոսի Շանդենից, այսինքն՝ այն
ժամանակից, երբ ծնեց Յիսուս Վրիս-
տոսը. բոլոր Վրիստոնեաները այդպէս
են համարում:

Տառըլեցերորդ խօսակցունեն.

— Արդուհի ջան, դու գիտե՞ս ինչ-
պէս է կոչվում այն՝ որի վերայ բնակ-
վում ենք, որի վերայ շինած են տներ,
որի վերայ ման ենք դալիս և որ տե-
ղից բունում են ծառերը:

— Երկիր:

— Խոկ այն ի՞նչ է մեր գլուխների
վերև, ուր երեսում են արեգակը, լուս-
նեակը և աստղերը:

— Երկինք:

Ով է ստեղծել այդ երկիրը և եր-
կինքը:

— Կստուած:

— Երկիրը շատ և շատ մեծ է ու
բոլորակ է: Կա հինգ մասն ունի: Միտ-
քըդ է այդ մասերի անունները:

— Մոռացել եմ, մայրիկ ջան:

— Ուրեմն լսիր. Եւրոպա, Եսիա,
Եփրիկա, Եմերիկա և Կոր Հոլանդիա
կամ Եւստրալիա: Մենք բնակվում ենք
Եւրոպայումը:

Տառըլեօներորդ խօսակցունեն.

— Արդուհի ջան, գիտե՞ս մարդուս
մննդի համար առաւել ինչ բան է հար-
կաւոր:

— Չը գիտեմ:

— Հաց:

— Ինչո՞ւ, մայրիկ ջան:

— Կոիր և կիմանաս: Օանազան

Հացապտուղներ են բունում. աշորի,
ցորեան, գարի և սև ցորեան: Աշորուց
սև հաց են թխում, ցորեանից — սպի-
տակ, իսկ նոյնպէս կարկանդակները, լոշ,
գաթայ և նազուք: Գիւղացիները գա-
րուց իրանց համար հաց են պատրաս-
տում, որը գարու ճաթ է կոչվում. սև
ցորեանից լանդակ են շինում:

— Իսկ դու գիտե՞ս, թէ ի՞նչպէս է
բումնում հացը:

— Չը գիտեմ:

— ‘Վախ’ ցանում են հատիկը, այդ
հատկից կանանչ խոտ է բումնում, խո-
տից մի հասկ է դուրս գալիս, որը՝ երբ
բումնում մեծանում է, դեղնում է և
նրա մէջ հասնում է ոչ թէ մի, այլ
մի քանի տասնաւոր հատիկներ:

Այն ժամանակը գնում են դաշտը
տղամարդիկը և կնիկարմատները և ման-

գաղներով հնձում են արմատից այդ
հասկերը:

Այդ հասկերից խուրձեր են կապում
և յետոյ տանում են տուն, կալը, և
կասում են:

Կասած հատիկը ժողովում են ա-
ռանձին, իսկ դարմանը առանձին: Դար-
մանը տալիս են կովերին, իսկ հատիկը
տանում են ջրաղացը:

Ջաղացպանը աղում է նրան և ա-
լիւր է շինում: Ալիւրից արդէն հացեր
և կարկանդակներ են թխում:

Պէտք է սրտանց ինսդրել Աստու-
ծուն, որ ամեն տարի շատ հաց բումնի,
որովհետեւ հացը չայաստանի ամենամեծ
հարատութիւնն է: Առանց հացի չի կա-
րելի ապրիլ:

Տառականութերութ իւստականութեա:

— Ա արդուհի ջան, այժմ կուզես
ես քեզ կը պատմեմ, թէ հագուստի
համար առաւել ինչ է հարկաւոր մար-
դուս:

— Պատմեցէք:

— Վուշ և ոչխարի բուրթ:

Վուշը ցորենի պէս բումնում է
դաշտումը և ծաղկում է գեղեցիկ կա-
պոյտ ծաղիկներով. իսկ երբ նրան պո-
կում են գետնից և չորացնում են, այն
ժամանակը նրան ծեծում են և մանրա-
թելեր են շինում:

Եյդ ծեծած մանրաթելերից շինում
են մանած, իսկ մանածից մանում են
թել, յետոյ ջուհակները թելից քա-
թան են գործում:

Քու շապիկները, սփոռցները, թաշ-

կինակները, երեսսրբիչները, բարձի ե-
րեմները, իսկ նոյնպէս անձեռոցիկները
— այդ բոլորը շինված են վուշից. թե-
լից գուլպաներ են անում:

Մայրդ նոյնպէս ամեն բան թելով
է կարում: Դու վիտես, որ գառները
և ոչխարները ծածկված են բրթով: Խւ-
րաքանչիւր տարի նրանց խուզում են,
բուրթը ծախում են, մանում են նրան
և այդ բրթի թելից գործում են մա-
հուդ, ֆլանել, շալեր և տաք գուլպա-
ներ ու վերմակներ, նոյնպէս խալիչմաներ
և տաք պիխարկներ:

Հօրդ շորերը և մօրդ շալերը — այդ
բոլորը ոչխարի բրթից են: Վարդուհու
մերինոսի հագուստները և եղբայրներիդ
վերարկուները նոյնպէս բրթից են:

Վուշը և ոչխարի բուրթը անշուշտ
հարկաւոր են: Վատուծուց պէտք է չնոր-

Հակալ լինել, որ նա մեղ այսքան գեշտցիկ և օգտաւէտ առարկաներ է տաւիս, որովհետեւ Հայաստանի վուշը և ոչխարի բուրթը միշտ շատ է լինում:

Տառապնական իշխանութեան.

— Մայրիկ ջան, իսկ ինչից են շինում փողը:

— Փողը շինում են ոսկուց, արծաթից և պղնձից: Աստուած խոր է թաղել գետնի մէջ ոսկին, արծաթը և պղինձը: Մարդիկը փորեցին գետին և նրանց գտան:

Եռաջ կրակի վրայ նրանց հալում են, ծեծում են, մաքրում են և նրանցից արդէն փոքր և մեծ փողեր են շինում:

Փողը անշուշտ հարկաւոր է: Փողը պէտք է պահել, որովհետեւ շատ դըժւար է նրանց ձեռք զցել: Հայրդ պէտք է շատ աշխատի, որ փող վաստակի: Աղքատներին էլ պէտք է փող տալ: Փողով կարելի է գնել ամեն բան. Հաց, շոր, զիրք և խաղալիքներ:

Բայց չը պէտք է ամեն բանից իւ վեր դասել փողը, որովհետեւ շատ բան կայ, որ փողով չես գնիլ:

— Մայրիկ ջան, ի՞նչ չի կարելի փողով գնել:

— Ամենաթանկագին առարկաները. առողջութիւն, խելք, բարեգործութիւն, բարեկամներ և բաղդաւորութիւն:

— Մայրիկ ջան, ես այդ բանը չեմ հասկանում:

— Ուրեմն լսիր: որքան անթիւ փող ունենաս, իսկ եթէ դու կերակուրի մէջ

չտփաւոր չը լինես և քեզ չը պահպանես, առողջութիւն չես ունենալ. — իսկ առողջութիւնը չես կարող գնել:

Որքան անթիւ փող ունենաս, իսկ եթէ դու չես սովորիլ և ուսում չես սունիլ — իսելօք չես լինիլ:

Եթէ դու անթիւ փող ունենայիր ու եթէ դու բարի, հնազանդ և ազօթասէր չես լինիլ, — դու առաքինութիւն չես ունենալ:

Որքան անթիւ փող ունենաս, իսկ եթէ դու քաղցր, բարի և ողորմած չես լինիլ — դու բարեկամներ չես ունենալ:

Եթէ դու արկղներով լիքը փող ունենայիր, այսու ամենայնիւ չես կարող գնել բաղդաւորութիւն, եթէ Աստուածուղարկէ:

— Բայց ի՞նչ բան է բաղդաւորութիւնը, մայրիկ:

— Ով որ առողջ է, իսելօք է և առաքինի է, որին սիրում են մարդիկը և Աստուած՝ նա ունի բաղդաւորութիւն: Իսկ դու այս բոպէիս իմացար, որ այս բաներս փողով չես կարող գնել:

Յիշիր, Վարդուհի, յիշիր այս բաները ամեն օր: Փողը լաւ բան է, բայց աւելի լաւ է և օգտաւէտ է առողջ, իսելօք և բարի լինել, սիրելի լինիլ Աստուծուց և մարդկանցից, քան թէ շատ փող ունենալ:

Վ. ԵՐ.:

ա և ձ զօրեմ, ձ զրուս որ ի՞ն—
պիկրուն մի նորդի միջու և վիճակ
մէջ նիստուարաց միւս ուն հաւառու ։ և
որ որ զարման աշխատ ուր ար իւլ
համբ բուրժ ու խարի ուղևան
այ որ պիտի, վ'արդու ի, պիտի
բուր ։ և մաս այ բարի որ մաս ույն
հրուս ։ և ուժաւոր և և այ ժաման
համ մինչդեմ շնորհ ու զարծ
և մաս ուղարկութիւն և զանձաւու ։
Համանաւ բայ առա

ԱՂՋՁՆԵՐ

Տէրունական աղօն+.

- ա. Հայր մեր որ յերկինս եւ՝ սուրբ եղիցի անուն քո :
- բ. Խկեսէ արքայութիւն քո :
- տ. Խղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի :
- տ. Զհաց մեր համապաղորդ սուր մեզ այս օր :
- է. Թաղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թու-
ղումք մերոց պարտապանաց :
- ւ. Խւ մի տանիր զմեզ ի փորձութիւն :
- է. Այլ փրկեաւ զմեզ ի չարէն :
- Զի քո՛ է արքայութիւն և զօրութիւն և փառք
յաւիտեանս . ամէն :

Աղօն+ յարունեան .

Վրիսասոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ ըզ-
մահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս
պարզեաց, նմա փառք յաւիտեանս . ամէն :

Աղօն+ յետ ճառնելոյ յեկեղէցի .

Ի մէջ տաճարիս և առաջի Սստուածընկալ և
պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ խրանացս
խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմ . զսուրբ և
զհրաշալի և զյաղթող տէրութիւնդ քո օրչնեմ
և փառաւորեմ . և քեզ մատուցանեմ զօրչնութիւն
և զփառս ընդ Հօր և ընդ Առւրբ Հոգւոյն, այժմ
և միշտ և յաւիտեանս :

Ե Ր Գ Ե Ր

Յ Ա Ն Ա Ս Ա Յ Ի Շ Ա Յ Ք Ե Ր Ե Ր

Ա.

Հ Ա Յ Լ Բ Ե Ն Ի Ք ս ը ր բ ա ղ ա ն ,
Ի մ ս ի ր ու ն ա շ խ ա ր հ ,
Թ ը լ ո չ ու մ ե մ դ է պ ի ք ե զ
Հ ո ղ ւ ո վ ս ա ն դ ա ղ ա ր :

Ի ա յ ց ա ւ ա ղ ա յ ս բ ա ն տ ո ւ մ
Փ ա կ ու ա ծ ե մ ա ն տ ե ս ,
Պ ա տ ե ր ա ղ ի դ ա շ տ ո ւ մ
Չ ե մ կ ր ո վ ո ւ մ և ե ս :

Հ ա ն ա պ ա զ տ ա ն ջ ո ւ ե ց ա յ
Վ ո ր ձ ա կ ա ս տ ա գ լ ո վ ,
Ա ր ա տ ո ւ մ շ ղ թ ա ն ե ր ի
Չ ա յ ն ե ր կ ր ե լ ո վ :

Թ ա ո ւ լ ա յ ս տ ե լ շ ա ր չ ա ր պ ի մ
Վ ն ձ ա ն ո թ կ ա պ ո ւ ա ծ ,

Ո յ ա յ ն ք ե զ Հ ա յ լ բ ե ն ի ք
Տ ե ս ն ե մ :

Ե կ ւ , ք ո
Փ ո թ ո ր կ ի մ է ջ է
Ե ւ վ ա ռ ա ր շ ա լ ո յ ս ի
Օ ր ը խ ա ւ ր ու մ է :

Զ ը գ ի տ ե մ ի ն չ պ է ս է
Կ ը ռ ի ւ ն հ ր դ ե ց ու մ ,
Ե ս չ ո ւ ն ի մ ո չ ի ն չ լ ո ւ ր ,
Ի ա յ ց լ ո ւ ր ն է թ ը լ ո չ ո ւ մ :

Վ տ ա ն ո ւ մ ե մ մ ի շ տ հ ա մ բ ա ւ
Վ պ ա ն ո ւ թ ե ա ն ա շ ե ղ ,
Թ ա փ վ ո ւ մ է ա զ գ — ա ր ի ւ ն
Ի ա յ ց ե ս չ ե մ ա յ ն տ ե ղ :

Կ ր փ շ ր ե մ ի մ շ ը լ թ ա ն ,
Կ ե լ ն ե մ ա յ ս բ ա ն տ ի ց ,
Վ ը ր բ ե լ դ ա ռ ն ա ր տ ա ս ո ւ ք
Վ ո ր ս է պ ա կ ա բ ի ց :

Վ ա ջ ա լ ն կ ե ր ն ե ր ո վ
Ճ ե շ տ է ի ն ձ կ ր ու ե լ
Ե ւ ս ո ւ ր ը գ ո ր ծ ի հ ա մ ա ր
Վ ա ղ ց ը է մ ե ռ ա ն ե լ :

Բ.

Ենց համար չեւ

Ենձ համար չէ գարնան դալը,
Ենձ համար չէ ծառի ծաղկելը,
Ուրախութեան սըրաի գրգիռը,
Ու մի բերկանք չեն ինձ համար :

Ենձ համար չէ կենաց բաղկը,
Ենձ համար չէ երջանկութիւնը.
Եւ մրայօն կոսի աչերը,
Կոցա արցունք չեն ինձ համար :

Ենձ համար չէ փայլուն լուսնի,
Ենտառ ու սար լուսաւորելը,
Գարնան վարդի երգչի տաղերը,
Մոխակ ու վարդ չեն ինձ համար :

Ենձ համար չէ բարեկամաց
Մէկտեղ սիրով տօն կատարելը,
Օտտիկ օլուայ ուրախ ասելը,
”Քրիստոս յարեաւ“ չէ ինձ համար :

Ենձ համար չէ ծնողաց լացը,
Ենձ համար չէ աղջկայ արխելը,

Գերեզմանիս վրայ արտասուիլը, Եւ այսպահ
Բարեկամաց չէ ինձ համար :

Բայց ինձ համար կուգայ ժամը,
Աերթամ թըշնամեաց պատերազմը,
Եւ մահարիթ սպանիչ գնտակը
Ենդ պատրաստած է ինձ համար :

Գ.

Երամ-Երգ.

Մեր քաջ Հայոյ զօրութիւն, {
Վեր կացէք, ասաց Երամ.

Եռաջեաւ բայցէք նըշան,
Գնանք Հայ լեզուն տալածենք.

Ո՛չ Երամ, Երամ, Երամ:

Երամքար զըստրուկն Եսորին
Բարբառ կոչէ առաջին.

Գշուխն յաշտարակ մեխեցէք,

Որ երկնից տրուի հայերէն : Ո՛չ, և այլն :

Յորդան տուքք, զօրք օ՞ն յորդան

Դէպ ի կողմի արևմտեան,

Պայտապիս Քաղեայ Տիտան,
Գիք զիս տապաստ ի դամբան։ Ո՞՛հ, և այլն։

Յորդան տուք օ՞՞ն, զօրք յորդան,
Տեարք լայնալիճ աղեղան։
Քնքուշախօս ամբոխին
Տաւ ըզեզու հայկաբան։ Ո՞՛հ, և այլն։

Ովչ չը գիտէ ձայերէն,
Ոչ ձանաչէ նա զօրէն.
Որ բանիւ ձայոց արար
Կայ մեծ աշխարհ մեզ համար։ Ո՞՛հ, և այլն։

Ի ծովէ մինչւ ի ծով։
Թռող խօսին հայ բարբառով։
Ներհակողին նիզակով
Յուցէք ո՞՛հ, ասաց Երամ։ Ո՞՛հ, և այլն։

Դ.

Ն է ա յ է ն.

Ակնապիշ, անձայն, խորհուրդ ձակատիդ,
Պատանի ուր ես մշտքով մոլորած։
Ներկ ու վրձիններ ցիր ցան առաջիդ
Վաշեայ կրտաւը քու հանդէպ փրւած։

Շուռ տուր աչերդդ, նայէ դէս ու դէն,
Տես քեզ ծաղրում է անմիտ ամբոխը
Օարթիր, սիրելի, այդ անուշ քընէն,
Գոնէ մի անգամ հանէ քո ոխը։

Բայց դու ներում ես նոցա վեհ հոգւով,
Խուլ ես աշխարհի ունայն շրջուկին . . .
Յանկարծ աչերդ փայլեց սուրբ շնորքով,
Ճաշկայի սիրարդ թընդաց խիստ ուժգին։

Եռիր վրձինըդ, թաց արիր ներկով,
Շունչ տրւիր անշունչ կոպիտ կրտաւին,
Արկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով։
Վեզ անկարելին անյայտ է բնաւին։

Աէր, ատելութիւն, հանձար, բարկութիւն
Տըւիր պատկերին մատիդ շարժուածով։
Ինչ որ չի յայտնեց ձարտարի լեզուն,
Գու պարզ յայտնեցիր անձայն խօսուածով։

Եպշեց ամրոխը վազեց, յառաջեց,
Գո կենդանագիր պատկերի դիմաց։
Օնկացք զըմուռս ու հալուէ խընկեց,
Գոշեց մեծաձայն „Դա է իմ Եասուած“։

Բայց աիս, քու անքուն ժամերու ծիզը
Վանի մի արծաթ հազիւ գին զըրին։

Ասեղծողդ դարձար քու խեղճ խըլճիթը,
Ակեր շարեցին շուրջ քո պատկերին :

Եթ Ա պարտանայ և պահանաց .

ՊԱՐԴԱՆ .

Ո՛ւ հայկազունք, ո՛վ դիւցազունք,
Եհա ձեղ նոր հանդիսաբան,
Բացէք աչքերդ, հերիք ննջէք,
Տարիք դարեր են անցական :

ԶՈՐԱԿԱՆՔ .

Մ'նք պատրաստ ենք, մենք ուխտել ենք,
Եեր կեանքը զոհ բոլորանուէր .
Մատաղ անել այօց ազգին,
Ետրա լեզուին և կրօնին :

Ա ԱՐԴԱՆ .

Վաէք սուսեր, նետ ու անեղ,
Ելէք ընդդէմ ձեր թշնամեաց .
Ձեր հաւատը և ձեր ազգը
Պաշտպանեցէք յօսար ազգաց :

ԶՈՐԱԿԱՆՔ .

Հայ զինուորի կեանքը դառն է,
Երբոր պարապ տանն է նստած .
Մ'եղ աստարէղ անմահ փառաց
Աըուուի դաշտն է նշանակած :

ՎԱՐԴԱՆ .

Հայ զօրականք, ձեր նետերը,
Կապարձից մէջ հերիք մընան .
Ձեր երկիրը Պարաից ոտից
Ընդդէմ լինին այդպէս կոխան :

ԶՈՐԱԿԱՆՔ .

Մ'նք պատրաստ ենք, մենք ուխտել ենք.
Մ'եր սուրբ երկրից հալածական .
Եռնել անկիօն Պարաից աղզը,
Փըրիչի Խոացն է մեղ օգնական :

ՎԱՐԴԱՆ .

Հայօց հովիւք, ձեր ոչխարներն,
Եշը սար ու ձոր թափառական
Գաղանաց Ճանկն ընկած ողբան,
Եշը չը լսէք նոցա կական :

ԶՕՐԱԿԱԾՆՔ.

ՄՆԿՔ պատրաստ ենք, մենք ուխտել ենք.
Եւետարան Խաչ ի ձեռին,
Եռաջնորդել Հայոց զօրքին,
Ի ժամ սըրոյ պատերազմին:

Զ.

Ո ՞ Յ Լ ՞ Է Դ ՞

ԵՇԱ՛ սուրհանդակի սայլակը
Ուղիղ ճամբով է դուրս թըռչում,
ԵՌ Վարդայի տըխուր զանգակը
Կամարի տակ է զողանջում:
Երթուն սայլորդը գիշերուայ դէմ
Խւր վիճակի վերայ տըխուեց.
ԵՌ սիրեկնի աչաց կարօտը
Կա տըխրագին ձայնով երգեց:
,, Կապուտ աչեր, կապոյտ աչեր,
Կըտրճիս կեանքը մաշեցիք,
Խնչու, ինչու դուք չար ոսոխներ,
Խնչու սիրտերը բաժանեցիք:
Մընաս բարեաւ իմ սուն հօրական,
Մընաս բարեաւ իմ սիրական.

Ես կը հանգչիմ զի՞նչ բոց կըրակին
Եյս անբընակ դաշտի միջին:

Երեխ լըսը խաւարել է,
Եյս աշխարհումն էլ ոլք եմ ես.
Սըստիս կարօտը աղջկայ տեսնելիս
Մինչև ի մահ զըրկած եմ ես “:

Եյս որ ասաց . շարժեց մըսրակը,
Երեք ձխանց մէջքին խըփեց.
Խւր սիրեկնի պարզ յիշատակը
Եյսպէս երգով նա վարատեց :

Է.

ԵՐԴ Ը Պ ԵՂԱՆԱԳԻՆ (*)

„ Կակъ у нашихъ у ворсть
стонть озеро воды... “

ԵՇԱ՛, մեր ման առաջին
Զըրով լիքը մի լիճ կայ:
Տրա լի լա, տրա լի լա,
Զըրով լիքը մի լիճ կայ:

(*) Եյս երկու երգերը, նոյնէս և Մանկական աղօթքը, որնք
առաջին անգամն են տպվում. ստացանք Պ. Կամար Տէր Դաւթեանցից,
որին յայտնում ենք մեր նորհակալութիւնը:

Փեսայացուն ձին բերեց
Մեր դրօմն մօտ ջուր տուեց :

Տրա լի լս, տրա լի լս,
Մեր դրօմն մօտ ջուր տուեց :

Փայտից կապեց իր ձիուն,
Խընդրեց աղջըկան սիրուն :

Տրա լի լս, տրա լի լս,
Խընդրեց աղջըկան սիրուն :

”Աիրուն աղջիկ, իմ հողի,
Խընդրեմ նրժոյդ ձիս պահի :

Տրա լի լս, տրա լի լս,
Խընդրեմ նրժոյդ ձիս պահի :

Խընդրեմ նրժոյդ ձիս պահի,
Նրժոյգս հազարներ արժի :

Տրա լի լս, տրա լի լս,
Նրժոյգս հազարներ արժի :

Որ չը պոկի իր սանձը,
Որ չը կոտրի իր թամբը :

Տրա լի լս, տրա լի լս,
Որ չը կոտրի իր թամբը :

Ը.

Անյըլ և ճանոնիները.

„Ինչու, մայրիկ, դու անդադար,
Յիշում ես մեր քրոջ համար.
Դու ինքդ կասես, մեր Շուշանը
Գընաց ուրիշ լսւ աշխարհ :“

— Ո՞չ, ես գիտեմ լսւ աշխարհ է,
Ի՞սյց այնտեղ չը կան ոչ դաշտեր,
Ո՞չ հոտաւէտ մանուշակներ,
Եւ ո՞չ ուրիշ ծաղիկներ :

„Անյըրիկ, մայրիկ, երկրներումը
Նրեշտակները երգում են .
Եհա փայլուն աստղիկները
Եյս կողմ այն կողմ վագում են :“

— Ի՞սյց խեղձն այնտեղ մայրիկ չունի,
Ո՞վ լուսամոխց կը նայէ,
Թէ ի՞նչպէս նա դաշտի մէջը
Կաղկէ ծաղիկ կը վագէ :



• *A study of the effects of* *and* *on*

... quodcumque in meo tempore, et deinceps
... quodcumque tempore quodcumque in meo
... tempore, et deinceps.

શ્વરૂપ નાની વિદ્યારી ના, કુલ-
ધિરાંગ જે હોય ની પદ્ધતિમણ
નાની વિદ્યારી નાની વિદ્યારી ના, કુલ-

Montgomery, New York, May 1877.

• ill. 3. Aug. 1. upphöldningur
upphöldspánumar d'Augusti in
vistla. Verður henni ógæt umhverf

401

